



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Է. ՄԵԼՔՈՆՅԱՆ

**ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ
ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ**

ՈՒՍՈՒՄՆԱՄԵՔՈՂԱԿԱՆ ԾԵՌՆԱՐԿ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ և մագիստրանտների համար

ԵՐԵՎԱՆ
ՄԱՆԿԱԿԱՐԺ
2009

ՀՏԴ 941 (479.25) (07)
ԳՄԴ 63.3 (23) ց 73
Ն 933

Հրատարակության է երաշխավորել Խ.Աբովյանի
անվան հայկական պետական մանկավարժա-
կան համալսարանի գիտական խորհուրդը

Կազմողներ՝ պրոֆեսոր **Մ.Կարապետյան**
դոցենտ **Է.Գևորգյան**
ասիստենտ **Է.Մելքոնյան**

Գրախոսներ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Գ.Գեղամյան**
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Է.Մինասյան**

Ն 933
«Նոր նյութեր հայոց նորագույն պատմության մասին. –
Եր.: Մանկավարժ, 2009.-48 էջ:

Ձեռնարկում ներկայացվում են հայոց նորագույն պատմության մի շարք
կարևորագույն հարցեր՝ 1920թ. հայ-թուրքական պատերազմում հայկական բա-
նակի պարտության պատճառների, 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայ-
մանագրի կնքման հանգամանքների, խորհրդա-թուրքական հարաբերությունների,
Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի, Ալեքսանդրապոլի պայմանագրի,
Հայաստանի սահմանների հարցերում Ստալինի ունեցած դերի, Սևրի պայ-
մանագրի, Հայաստանի մանդատի և այլն, որոնք նորահայտ փաստերի օգտա-
գործմամբ լուսաբանված են ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշ-
խատող, դոցենտ Ռեմ Ղազանջյանի և Հայաստանի Ազգային Անվտանգության
ծառայության պահեստի գեներալ-մայոր Դավիթ Օհանյանի հրապարակումներում:

ISBN 978 – 99941 – 69 – 19 - 1

ԳՄԴ 63.3 (23) ց 73

© «Մանկավարժ» հրատ., 2009թ.

ՄԱՆԿԱՎԱՐԺ 2009

Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումից հետո բուռն
հետաքրքրություն առաջացավ մեր ժողովրդի նորագույն ժամանակա-
շրջանի պատմության մի շարք կարևորագույն հարցերի շուրջ: Դրանց
թվում էին 1920 թվականի հայ-թուրքական պատերազմում հայկական
բանակի պարտության պատճառների, Հայաստանի խորհրդայնացման
հանգամանքների, Հայաստանի նկատմամբ խորհրդային պետության մի
շարք ղեկավար գործիչների դիրքորոշման, 1921թ. մոսկովյան ռուս-թուր-
քական պայմանագրի գնահատման և այլ հարցեր: Հնչեցին իրարամերժ,
երբեմն էլ բուն իրականությունից հեռու կարծիքներ, գնահատականներ,
անհիմն մեղադրանքների թիրախ դարձան պատմական շատ գործիչներ:

Մինչդեռ հիշյալ հարցերի ճշմարտացի լուսաբանումը հնարավոր է
միայն ու միայն այն ժամանակի արխիվային փաստաթղթերի ամենայն
մանրամասնությամբ ուսումնասիրելով, որով էլ շուրջ հինգ տասնամյակ
զբաղվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող,
դոցենտ Ռեմ Ղազանջյանը: Սեփական տքնաջան պրպտումների արդյուն-
քում պատմաբան գիտնականը հանգել է ուրույն եզրակացությունների և
հանդես եկել բազմաթիվ հրատարակումներով: Այսպես՝ «Գոլոս Արմենիի»
թերթի 1991թ. փետրվարի 9-ի համարում տպագրվեց նրա «Պատմություն
անոանց այդ էլ կեղծված է» ծավալուն հոդվածը, որտեղ ցույց է տրվում, որ
այդպես կոչված ՀՀԿ Կենտկոմին վերագրվող 1920թ. սեպտեմբերի 20-ի
շրջաբերականը, որի տարածմամբ իբր մեծապես պայմանավորված էր հայ-
թուրքական պատերազմում հայկական բանակի պարտությունը, իրակա-
նում կեղծագիր է, և նման փաստաթուղթ պարզապես գոյություն չունի, իսկ
հայ բոլշևիկները որևէ մեղսակցություն չունեն Կարսի անկման համար:
Ցույց է տրվում նաև, որ պարտության իրական պատճառը թուրքական
ուժերի բացահայտ գերակշռությունն էր:

Նույն հոդվածում փաստացիորեն ցույց է տրվում, որ 1920թ. սեպտեմ-
բերին Բաքվում կայացած Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը
ոչ միայն որևէ հակահայկական որոշում չի ընդունել, որի հիման վրա իբր

Հայաստանի վրա հարձակվելու համար թուրքերին ձեռքերի ազատություն է տրվել, այլև առհասարակ համագումարում Հայաստանի վերաբերյալ որևէ հարց չի դրվել:

Մեկ այլ հոդվածում Ռ.Ղազանջյանը ցույց է տալիս, որ 1921թ. ռուս-թուրքական պայմանագիրը ստորագրվել է ոչ թե մարտի 16-ին, այլ 18-ին և պարզաբանում է պայմանագիրը հետին թվով ստորագրելու դրդապատճառները:

«Գոլոս Արմենիի» թերթի 2001թ. ապրիլի 26-ի և 2002թ. մարտի 21-ի համարներում հրապարակվեցին գաղտնագերծված արխիվներում Ռ.Ղազանջյանի հայտնաբերած թվով 14 փաստաթղթեր, որոնք վկայում են այն բավականին բարդ իրադրության մասին, որը հարկադրեց Ռուսաստանին՝ գնալ հայտնի զիջումների թուրքերին ի պատասխան նրա նվաճողական վերջնագրային պահանջների՝ հանուն Անդրկովկասի հարավում պատերազմից խուսափելու: Ռ.Ղազանջյանի կարծիքով Ռուսաստանի համար դա փաստորեն երկրորդ Բրեստ էր, երբ բանակցող կողմերից մեկը, տվյալ դեպքում՝ Թուրքիան թելադրում էր մյուսին իր պայմանները:

2007թ. դեկտեմբերի 20-ին, ելույթ ունենալով ՀՀ Ազգային ժողովի լսումների ժամանակ, Ռ.Ղազանջյանը առաջարկ է մտցրել 1921թ. Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը միջազգային իրավունքին համապատասխան դիտարկել իբրև անիրավահավասար պայմանագիր, երբ կողմերից մեկը՝ Թուրքիան, օգտվելով իր համար բարենպաստ հանգամանքներից, հարկադրել է մյուս կողմին՝ Ռուսաստանին, պայմանագիր ստորագրել վերջինիս համար վնասակար պայմաններով:

«Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի 2000թ. մարտի 18-ի և «Գոլոս Արմենիի» 2007թ. մարտի 15-ի համարներում լույս տեսան Ռ.Ղազանջյանի «1921 թվականի մոսկովյան պայմանագիրը և Հայկական հարցը /նոր փաստաթղթերի լույսի տակ/» ընդարձակ հոդվածները: Նրանցում մանրամասնորեն ներկայացնելով պայմանագրի ստորագրման հանգամանքները, հեղինակն անվիճելի է համարում այն իրողությունը, որ իր թուլության հետևանքով և իրենից անկախ արտաքին ու ներքին հանգա-

մանքների ճնշման տակ ՌԽՖՍՀ-ն ստիպված էր 1921 թվականին /ի տարբերություն 1920թ./ ստորագրել մոսկովյան խորհրդա-թուրքական պայմանագիրը, որը չէր համապատասխանում Ռուսաստանի շահերին ու ձգտումներին, ուստի վերջինը նպատակ չուներ «զոհաբերել» հայկական տարածքները «եղբայրական» Թուրքիային կամ «միջազգային հեղափոխությանը»:

Ընդգծվում է նաև, որ, ճիշտ է, 1921թ. Մոսկովյան խորհրդա-թուրքական պայմանագիրը չարդարացրեց հայերիս հույսերը, բայց այն զերծ պահեց մեզ Թուրքիայի հետ նոր պատերազմի վտանգից, և դա ամենամեծ նվաճումը եղավ:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Ռ.Ղազանջյանի «խորհրդա-թուրքական հարաբերությունների մի քանի հարցերը նոր փաստաթղթերի լույսի տակ /1920-1921թթ./» հրապարակումը /Научный центр армянского вопроса Ереванского университета им. Грача Ачаряна, Альманах N 1, Армянский вопрос, Материалы научной сессии, Ереван, 2000/.

Հրապարակման մեջ հայտնվում է այն տեսակետը, որ ՌԽՖՍՀ հարաբերությունները երիտթուրքերի և քեմալականների հետ չեն եղել անքան «բարեկամական» ու «եղբայրական», ինչպես ներկայացվում է գրականության մեջ վերջին շրջանում: Լենինը Մոսկվայում չի ընդունել երիտթուրքական պարագլուխներից և ոչ մեկին, չնայած վերջիններիս բազմաթիվ խնդրանքներին, իսկ քեմալականների նկատմամբ դրսևորվել է զգուշավոր մոտեցում /էջ 150/:

Նորահայտ փաստաթղթերի հիման վրա Ռ.Ղազանջյանը ցույց է տալիս, որ միայն 1920թ. սեպտեմբերի 29-ին ՌԿԲ/Կ ԿԿ-ի պլենումը վերջնական որոշում կայացրեց «քեմալականներին դրամով և զենքով փաստացի օգնություն ցույց տալու» մասին, երբ դեռ տեղեկություններ չուներ Հայաստանի վրա թուրքական հարձակման սկսման ու նրա բնույթի մասին, իսկ ինչ վերաբերում է ոսկուն՝ «սկզբունքորեն հավանություն տալ, իսկ ման-

րամասների ու չափերի մասին պայմանավորվել...», որը կրկին հետաձգում էր հարցի վերջնական լուծումը:

Հիշատակված է նաև, որ չնայած այն հանգամանքին, որ տվյալ որոշման համաձայն նույն տարվա հոկտեմբերի սկզբին թուրքերին տրվեց զենքի ոչ մեծ խմբաքանակը՝ վերապահությամբ, որ այն «արևմտյան ճակատի համար է» /ինչպես այն նշված էր Թուրքիայի պահանջներում/, սակայն արդեն նույն ամսին, Հայաստանի վրա թուրքական հարձակման կապակցությամբ, զենքի հատկացումը նրանց դադարեցվեց, իսկ նույններին Մոսկվայի կարգադրությամբ թուրքական մինիստր Բեքիր Սամիից հետդարձի ճանապարհին հետ վերցվեց նաև ոսկին: Եվ միայն դեկտեմբերի կեսերին, երբ ռազմական գործողությունները Հայաստանի դեմ արդեն դադարեցված էին, միայն այն ժամանակ որոշվեց վերսկսել զենքի ու դրամի մատակարարումը թուրքերին:

Հետաքրքրությունից զուրկ չէ նաև «Գ.Վ.Չիչերինի նամակի բովանդակության և ՌԿ/բ/Կ կենտրոնական կոմիտեի քաղբյուրոյի 1920թ. հոկտեմբերի 14-ի որոշման մասին» հրապարակումը: Համապատասխան փաստաթղթերի հրապարակմամբ Ռ.Ղազանջյանը հերքում է ամբողջ աշխարհում լայն տարածում գտած այն սխալ կարծիքը, թե իբր 1920թ. հոկտեմբերին Հայաստանի վրա Թուրքիայի հարձակման ընթացքում քաղբյուրոն Հայաստանը խորհրդայնացնելու որոշում է ընդունել, ինչը առաջ եկավ Լենինի երկերի բազմահատորյակում Չիչերինի նամակի աղավաղման հետևանքով /Բանբեր Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ, Երևան, 2001, թիվ 3/:

1921թ. ռուս-թուրքական պայմանագրի ստորագրման հանգամանքները լայնորեն քննարկված են «Մոսկվայի 1921թ. ռուս-թուրքական պայմանագրի գնահատման հարցի շուրջ» հրապարակման մեջ /ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի «Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XX, Երևան 2001/: Ցույց է տրվում, որ «Լոնդոնյան գործոնի առկայությունը մշտապես հարկադրում էր ՌԽՖՍՀ կառավարությանը ոչ միայն գնալ զիջումների Թուրքիային, այլև բանակցությունները տեղափոխել

արագությամբ ավարտելուն ու նրա հետ ցանկացած պայմաններով պայմանագիր ստորագրելուն, որը թուրքերի պնդմամբ կոչվեց ոչ միայն «բարեկամության», այլ նաև «եղբայրության» մասին պայմանագիր:

Հողվածում ներկայացվում է նաև այն համառ պայքարը, որ խորհրդային կողմը հարկադրված էր մղել Լախիջևանի հարցում, սկզբից նախատեսելով այն դնել անմիջապես Մոսկվայի ենթակայության տակ:

«Գոլոս Արմենիի» թերթի 2006թ. նոյեմբերի 22-28-ի հայկական տարբերակում հրապարակված «Ա.Սկաչկոյի և նրա հողվածի մասին» հոդվածում, խոսելով «Ժիզն մացիոնալնոստեյ» թերթի 1921թ. մարտի 4-ի համարում տպագրված Ա.Սկաչկոյի հակահայկական հողվածի մասին, Ռ.Ղազանջյանը փաստերով ցույց է տալիս, որ նա ազգայնամուլ ու անազնիվ մարդ էր, երբեք ազգային գործերի ժողկոմ Ստալինի տեղակալը չի եղել և նրա հողվածը չի եղել թերթի առաջնորդողը: Նրան աշխատանքի էին ուղարկել Բաքու, նա երբեք առաջին դեմքերի թվում չի եղել և չէր կարող հեռակա կարգով ազդել Մոսկվայում իրականացվող գործերի վրա: Նրանից գոհ չէր նաև Ստալինը:

Ստորև հանգամանորեն ներկայացնում ենք Ռ.Ղազանջյանի երեք հրապարակումներ:

1. Ռ.Ղազանջյան. Պատմությունն առանց այդ էլ խեղաթյուրված է

«Գոլոս Արմենի» թերթը 1991թ. փետրվարի 9-ի 28-րդ համարում «Բանավիճային նշումներ» խորագրի տակ հրապարակել է Ռ.Ղազանջյանի վերոհիշյալ չափազանց կարևոր հոդվածը, որտեղ մեր կարծիքով հեղինակը անառարկելի փաստերի հիման վրա կատարում է երկու կարևորագույն եզրակացություններ. 1. հայ բուլշևիկները որևէ մեղք չունեն 1920թ. հայ-թուրքական պատերազմում հայկական զորքի պարտության մեջ և այդ կապակցությամբ վերջին շրջանում շրջանառության մեջ նետված բուլշևիկյան շրջաբերականի պատճենը կատարյալ կեղծիք է:

2. 1920թ. սեպտեմբերին Բաքվում կայացած Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում ոչ միայն որևէ հակահայկական որոշում չի ընդունվել, այլև համագումարում Հայաստանի մասին որևէ հարց չի դրվել:

Նախ՝ առաջին հարցի մասին: Շրջանառության մեջ դրված Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի 1920թ. սեպտեմբերի 20-ի շրջաբերականի կատարյալ կեղծիք լինելը բացահայտելու նպատակով հոդվածագիրը ամբողջությամբ ներկայացնում է այդ փաստաթուղթը՝ արխիվում պահպանվող նրա միակ օրինակի հիման վրա: Այդ փաստաթուղթը հետևյալն է. «Խիստ գաղտնի. Հայաստանի Կոմունիստների /բուլշևիկների/ Կենտրոնական Կոմիտեն հանձնարարում է բոլոր կուսակցական կազմակերպություններին, ինչպես թիկունքում, այնպես էլ ռազմաճակատում, և հատկապես Կարսի կայազոր մեկնող բուլշևիկներին՝ լայն պրոպագանդա ծավալել ընդդեմ պատերազմի առանձին զինվորների շրջանում և առանձին հավաքների ժամանակ, ինչպես նաև թռուցիկների միջոցով, հիմնական խնդիր ունենալով հետևյալը.

1. Թուրքիան այլևս նախկին թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ այլևս ագրեսիվ պլաններ չունի:
2. Քեմալական թուրքիան խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է և պայքարում է իր ազգային անկախության համար ընդդեմ իմպերիալիզմի /Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի/:
3. Հանրապետական Հայաստանի հաղթանակը թուրքերի նկատմամբ կնշանակի իմպերիալիզմի ուժեղացում Մերձավոր Արևելքում և դրանով իսկ կվտանգի հեղափոխության հաղթանակի գործը Անդրկովկասում, այնուհետև Արևելքի խորհրդայնացումը:
4. Հայ բուլշևիկ-կոմունիստների խնդիրը պետք է լինի արագացնել Հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագանա Հայաստանի խորհրդայնացումը:

Այդ նպատակներով անհրաժեշտ է.

1. Բոլոր միջոցներով քայքայել հայկական գործող բանակը, այսինքն՝

ա/ Կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել զորահավաքի անցկացմանը:

բ/ Ճակատներում համոզել զինվորներին, որ նրանք չկրակեն հարձակվող թուրքական զինվորների վրա, այլ լքեն առաջավոր դիրքերը և վերադառնան թիկունք:

գ/ Չենթարկվել սպաների հրամաններին և անհրաժեշտության դեպքում ոչնչացնել նրանց:

2. Այդ բոլորին զուգահեռ ամենաէականն է համոզել Հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթանակած թուրքական ասկյարը հեղափոխական ասկյար է, որը ոչ միայն իրեն թույլ չի տա որևէ բռնի գործողություն պարտված երկրի նկատմամբ, վնաս չի պատճառի բնակչությանը, այլ ընդհակառակը – կօգնի աշխատավոր հայ ժողովրդին՝ ազատագրվել իմպերիալիզմի գործակալների՝ դաշնակների տիրապետությունից:

3. Նորից ու նորից պարզաբանել, որ ազատագրվելով դաշնակների տիրապետությունից, Հայաստանը մեկընդմիջտ կկապի իր ճակատագիրը խորհրդային Ռուսաստանի հետ, մեկընդմիջտ վերջ կտրվի պատերազմին ու սովին և մշտական ընդհարումներից ու ժասպառ երկիրը կլցվի Ռուսաստանի հացով ու մասնակից կդառնա համաշխարհային հեղափոխության մեծ գործին:

Ծանոթություն. Նամակը կարդալ սահմանափակ թվով անձանց ժողովներում և կարդալուց հետո տեղում անմիջապես այրել:

Հայաստանի Կոմկուսի Կենտրոնական Կոմիտեի անդամներ Ա.Կասյան, Ա.Մռավյան, Ա.Նուրիջանյան, Շ.Ամիրխանյան, Ի.Դովլաթյան, Ա.Հովհաննիսյան:

N 218 Բաքու 20 սեպտեմբերի, 1920թ.

Ներկայացնելով շրջաբերականը, Ռ.Ղազանջանը գրում է, որ տվյալ «փաստաթղթի» կասկածելիությունն ակնհայտ է առաջին իսկ տողերից. 1920թ. սեպտեմբերին Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը դեռևս չէր

գործում, և մինչև 1920թ. հոկտեմբերի 1-ը բոլոր կարգադրությունները տրվում էին նույն Բաքվում գտնվող ՀԿԿ Արտասահմանյան բյուրոյի կողմից: Ընդ որում չի եղել ոչ մի դեպք, որ Արտբյուրոն հանդես եկած լինի ՀԿԿ ԿԿ-ի անվան տակ:

Ձարմանք է պատճառում նաև «փաստաթղթում» նշված ՀԿԿ ԿԿ-ի կազմը. «ԿԿ-ի վեց անդամներից», որոնք իբր ստորագրել են «շրջաբերականը», միայն երկուսն են քննարկվող ժամանակաշրջանում եղել ԿԿ-ի անդամ: ՀԿԿ Կենտկոմը ձևավորվել է 1920թ. օգոստոսի վերջին, հաստատվել հոկտեմբերի 1-ին և այդ ժամանակից էլ սկսել է գործել: Բացի այդ, «Կենտկոմի անդամներից» երեքը-չորսը, որոնք իբր ստորագրել են «շրջաբերականը», ընդհանրապես չէին մտնում Հայաստանի Կոմկուսի ղեկավարության՝ ոչ Արտբյուրոյի, ոչ Կենտկոմի կազմի մեջ:

Ռ.Ղազանջյանը կասկածի տակ է առնում նաև «փաստաթղթի» վրա դրված N 218 ելից համարը, քանի որ ՀԿԿ ԿԿ-ի ելից համարակալումն սկսվում է 1920թ. հոկտեմբերի 1-ից, իսկ ՀԿԿ Արտբյուրոյի ելից թղթերի համարակալումը 1920թ. սեպտեմբերին գերազանցում է 450-ը: Այնպես որ 1920թ. սեպտեմբերի 20-ին ՀԿԿ Կենտկոմի շրջաբերականը չէր կարող ունենալ ելից N 218, երբ մեկ ամիս անց՝ հոկտեմբերի 17-19-ին ՀԿԿ ԿԿ-ի ելից թղթերը հաշվառված են 107-128 համարների տակ:

Եվ վերջապես, ինչպես ամփոփում է Ռ.Ղազանջյանը ոչ ՀԿԿ ԿԿ-ի, ոչ էլ դրանից առաջ Արտբյուրոյի փաստաթղթերում չեն հանդիպում այն ժամանակներում չընդունված այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «Հայաստանի կոմունիստների /բոլշևիկների/ ԿԿ», «հայ բոլշևիկ-կոմունիստներ», «Հանրապետական Հայաստան», որոնք օգտագործված են այսպես կոչված «ՀԿԿ ԿԿ-ի շրջաբերականում»:

Ռ.Ղազանջյանի համոզմամբ լուրջ առարկություններ է հարուցում նաև «փաստաթղթի» բուն էությունը: Ինչպես հայտնի է, 1920թ. Մայիսյան ապստամբության ճնշումից հետո Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ղեկավարության կողմից բազմիցս կենտրոնի առջև բարձրացվել է Հայաստանի խորհրդայնացման հարցը: Սակայն միշտ էլ

շեշտը դրվում բացառապես էր ՌԽՖՍՀ-ի, այլ ոչ թե թուրքական գործերի վրա /վերջինիս հետ հույսեր էին կապում միայն Բաքվում գտնվող կենտրոնի որոշ ներկայացուցիչներ, այն էլ ոչ միշտ/: ՌԿ/ԲԿ Կենտկոմին ուղարկած ՀԿԿ ԿԿ-ի հոկտեմբեր-նոյեմբերի նամակում ուղղակիորեն նշվում էր, որ իրենք Հայաստանի խորհրդայնացումը հնարավոր են համարում միայն խորհրդային Ռուսաստանի ուժերով:

Հայտնի պատճառներով 1920թ. ամռանը և աշնանը Հայաստանի կոմունիստական կազմակերպություններն այնքան թույլ էին, որ հնարավոր չէր նրանց առջև քիչ թե շատ լուրջ խնդիրներ դնել: Մայիսյան ապստամբության ճնշումից հետո դրանք ջախջախված էին, կորցրել էին կազմակերպչական կապերը, հեղափոխական ուժերը ցրված էին, և Հայաստանում ինքնուրույն շարժում իրականացնելն անհնար էր:

Ռ.Ղազանջյանն ասվածը բավարար է համարում համոզմունք հայտնելու, որ տվյալ դեպքում գործ ունենք վարպետորեն հորինված կեղծագրի հետ, և մեզ հասած «ԿԿ-ի շրջաբերականի» միակ օրինակը, որը աստված գիտե, թե ինչպես է հայտնվել արխիվի դարակներում, իրենից ներկայացնում է ոչ ոքի կողմից երբևէ չստուգված ու չհաստատված մեքենագրական պատճեն:

Եվ որպեսզի ապագայում, հեզմանքով գրում է հեղինակը՝ մանրախնդիր ընթերցողը իզուր ժամանակ չծախսի «բնագրի» անպտուղ որոնումների վրա, իսկ ավելի ճիշտ՝ որպեսզի չկարողանա գլխի ընկնել, որ դա կեղծագիր է, «պատճենը» կարծեք թե հարևանցիորեն տեղեկացնում է բոլորին ու ամենքին, որ «փաստաթղթի» բնագիրը, մեղմ ասած՝ անհուսալիորեն կորած է, թե իբր այն դեռ այն ժամանակ էր ոչնչացվել վերևից եկած ցուցումի համաձայն /«կարդալուց հետո անմիջապես այրել»/:

Եվ ինչպես այստեղ չգթաշարժվել և շնորհակալ չլինել ճակատագրից, իսկ ավելի լավ է այն անհայտից, որը մեզ համար, չնայած «ԿԿ-ի» խստագույն կարգադրությանը, տեղի տվեց և հանեց այդ չարաբաստիկ «պատճենը» այդ գոյություն չունեցող «բնագրից»: Մանավանդ որ մեր լուսավորյալ դարում դեռ ամեն ինչ կորած չէ, դեռ հանդիպում են «գիտնական-

ներ», որոնք ոչ մի անգամ իրենց աչքերով տեսած չլինելով այդ նույն «բնագիրը», հանձն են առնում հաստատել, որ իբր նման փաստաթուղթ իրոք կազմվել և ստորագրվել է 34/բ/4 Կենտրոնի անդամների կողմից /«Ավանգարդ», 15 սեպտեմբերի, 1989, պրոֆ. Գ.Ն.Կարապետյանի հարցազրույցը/:

Եվ արժե դրանից հետո զարմանալ,-շարունակում է Ռ.Ղազանջյանը, որ բոլորովին վերջերս թերթերից մեկի էջերում մի բանասեր-հեղինակ ազատություն էր տվել իր երևակայությանը. «Բուլչևիկյան գործակալները,-գրում է նա,-թափանցելով զինվորական ստորաբաժանումներ, հայ զինվորներին կոչ էին անում դեն նետել զենքը և եղբայրանալ հեղափոխական թուրք ասկյարի հետ, խոստանում էին բոլոր ճնշվածների պաշտպան Կարմիր բանակի արագ ու հաղթական գալուստը: Պրոպագանդա էր տարվում գյուղացիների մեջ, ծախողվում էին զինամթերքի, պարենի մատակարարումները, խորտակվում էին ճակատ գնացող երկաթուղային շարժակազմերը» /«Республика Армения», 1990թ. հոկտեմբերի 19, նոյեմբերի 29/»: Եվ այդ բոլորը, պարզվում է, պատերազմի սկզբի երկու ոչ լրիվ ամիսների ընթացքում:

Անդրադառնալով Կարսի անկման հանգամանքներին և դրանում հայ բուլչևիկների «մեղավորությանը», Ռ.Ղազանջյանն ընդգծում է, որ «Դաշնակցություն» կուսակցության այն ժամանակների որևէ փաստաթուղթ դրանում չի մեղադրել բուլչևիկներին: Գեներալ Գոպի. Հախվերդյանը զեկուցում էր 33 զորքերի հրամանատար Թ.Նազարբեկյանին, որ, առաջին՝ գնդերը 2/3-ով համալրված են համոզված դասալիքներով, երկրորդ՝ սպաների մեծամասնությունը թույլ են և չեն վայելում զինվորների վստահությունը մարտում, երրորդ՝ պետերը նույնպես թույլ են և անմիտ կարգադրություններով կոտրել են հավատը զինվորների մեջ, հավատը իրենց ղեկավարողների նկատմամբ:

Այնուհետև հողվածագիրն ավելացնում է, որ ավելի վաղ՝ 1920թ. հոկտեմբերի 30-ին, Կարսի անկումից մի քանի ժամ առաջ գեներալ Դանիելբեկ Փիրումյանը հաղորդում էր գեներալ Ս.Սիլիկյանին հետևյալը. «Թուր-

քերի ուժգին ճնշման տակ մերոնք հորդեցին հետ: Լիակատար խուճապ է, բոլորը փախչում են... Ամրոցի ճակատագիրը կանխորոշված է»:

Ավելի՛ն՝ 33 զորքերի հրամանատար Թ.Նազարբեկյանի 1920թ. նոյեմբերի 2-ին ուղարկած ճեպագրում Կարսի անկման հանգամանքների վերաբերյալ նույնիսկ հատուկ ընդգծվում է, որ սաբոտաժի մասին լուրերը անհիմն են: «Նույնիսկ խոսք չի կարող լինել,- հաղորդում էր զորքերի հրամանատարը,-ամրոցի կամավոր հանձնման, իսկ առավել ևս՝ դավաճանության մասին»: Նրան երկրորդում էր գեներալ Գ.Հախվերդյանը. «Կարսի հանձնման և դավաճանության վերաբերյալ լուրերը չարամիտ զրպարտություններ են»:

Այսպիսով, ընդգծում է Ռ.Ղազանջյանը, 33 զորքերի նահանջի պատճառը հակառակորդի ուժերի գերակշռությունն էր:

Սակայն, ցավով շարունակում է նա, այն, ինչ բացարձակապես պարզ էր այն ժամանակ՝ 1920 թվականին, պարզվում է, որ այսօր արդեն պարզ չէ: Եվ եթե «ԿԿ-ի շրջաբերականը» սոսկ ակնարկ էր պարունակում բուլչևիկների «մեղքի» մասին, ապա 1990թ. ամռանը երևանում տարածված անստորագիր թռուցիկը, ինչպես մեզ տեղեկացնում է «Անդրադարձ» շաբաթաթերթի նույն տարվա հունիսի 14-ի համարը, արդեն «հայտնաբերել է» Կարսի անկման կոնկրետ «մեղավորին»: Դա, պարզվում է՝ եղել է դեռևս 1920թ. մայիսին զոհված հանրապետության կոմերիտմիության հիմնադիրներից մեկը՝ 20-ամյա Ղուկաս Ղուկասյանը, որը, ինչպես հայտարարում է թռուցիկը, 1920թ. սեպտեմբեր-հոկտեմբերին, այսինքն իր մահից 4-5 ամիս անց, «գործունեություն է ծավալել Կարսի ճակատի քայքայման ուղղությամբ»:

Եվ ով գիտե, խորը անհանգստությամբ շարունակում է Ռ.Ղազանջյանը, եթե ոչ այսօր, ապա վաղը այդ անստորագիր թռուցիկը կարող է հայտնվել արխիվային դարակի արդեն մեզ հայտնի «Կենտրոնի շրջաբերականի» կողքին՝ պատմությունից և մեր հիշողությունից դուրս մղելով իրական իրադարձություններն ու փաստաթղթերը, ինչպես այդ արվում է այժմ:

Ընդգծելու համար, թե այսօր որքան կարևոր է մանրակրկիտ ձևով ստուգել յուրաքանչյուր սկզբնաղբյուր և փաստ՝ մինչև այն հրապարակելը, չհայտնվելու համար կեղծարարի և խառնաշփոթ սերմանողի վիճակում, Ռ.Ղազանջյանը օրինակ է բերում Գ.Օրջոնիկիձեի 1920թ. հունիսի 21-ի հեռագիրը Գ.Չիչերինին և վերջինիս պատասխանը:

«Հենց նոր Բաքվից Գոլուբյուկը հաղորդեց երեկ Նարիմանովի ստացած ձեր հեռագրի մասին,-գրում է Գ.Օրջոնիկիձեին,- որը խոսում է Ղարաբաղը և Զանգեզուրը Ադրբեջանին միացնելու մասին»:

Անտեղյակ մարդու մոտ կարող է տպավորություն ստեղծվել, թե ՌևՖՍՅ արտգործօժոկում Գ.Չիչերինը, իսկ ուրեմն և Խորհրդային Ռուսաստանի այն ժամանակվա ղեկավարությունը իբր կողմ են եղել Ղարաբաղը և Զանգեզուրը Ադրբեջանին միացնելուն:

Մինչդեռ 1920թ. հունիսի 22-ին, Գ.Օրջոնիկիձեի վերոհիշյալ ճեպագիրն ստանալուց հետո, Գ.Չիչերինը շտապ հեռագրում է նրան հետևյալը. «Նարիմանովին ուղարկած իմ հեռագրի հետ կատարվել է տարօրինակ թյուրիմացություն... Նշված մարզերը ոչ մի դեպքում չպետք է միացնել Ադրբեջանին, դրանք պետք է զբաղեցնեն ռուսական և ոչ թե ադրբեջանական զորամասերը... Այնտեղ պետք է լինի ռուսական, և ոչ թե ադրբեջանական օկուպացիոն իշխանություն...»: Նման փաստաթուղթը, հասկանալի է, չէր կարող տեղ գտնել 1989թ. Ադրբեջանում հրատարակված փաստաթղթերի ժողովածուում, որտեղ հրատարակված է միայն Գ.Օրջոնիկիձեի հեռագիրը:

* * *

Այնուհետև Ռ.Ղազանջյանը հանգամանորեն անդրադառնում է մեկ այլ կարևորագույն խնդրի: Նա գրում է, որ վերջին ժամանակներս մեր մամուլում տակավին հաճախ կարծիք է հայտնվում, որ իբր 1920թ. սեպտեմբերին Կոմունիստական Ինտերնացիոնալի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ Բաքվում կայացած Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում «վճռվեց Հայաստանի նկատմամբ խորհրդա-քեմալական ապագա

հաշվեհարդարի հարցը» և նույնիսկ «որոշում ընդունվեց «իմպերիալիստական Հայաստանի» վրա «հեղափոխական Թուրքիայի» հարձակման մասին՝ հայ ժողովրդին դաշնակների լծից ազատագրելու դրոշի ներքո», որին իբր կողմ քվեարկեցին և քեմալականների և հայ բուլշակների պատվիրակությունները:

«Բայց թույլ տվեք, պարոններ, հարցնեն որտեղից եք այդ վերցրել», - զարմանում է հոդվածագիրը: Չէ որ նման բան չի եղել և չէր էլ կարող լինել: Բավական է թեկուզ հարևանցիորեն ծանոթանալ համագումարում ընդունված որոշումներին, որպեսզի համոզվեք, որ ոչ մի հակահայկական որոշում Արևելքի ժողովուրդների համագումարը չի ընդունել»:

Ենվերի ու նրա գլխավորած պատվիրակության մասին Ռ.Ղազանջյանը գրում է, որ նա փորձում էր իրեն ներկայացնել իբրև Թուրքիայում ազատագրական շարժման առաջնորդ և օգտագործել համագումարի ամբիոնը շովինիստական նպատակների համար: Կանխատեսելով այդ՝ համագումարում նրան ձայն չտվեցին: Նրա ելույթի տեքստը ենթարկվեց նախնական ստուգման և համագումարում թուրքերեն ընթերցվեց ուրիշ կողմից: Ընդ որում կարդացված դեկլարացիայի տեքստում Հայաստանի մասին ոչինչ չի ասվում:

Ավելին՝ ենվերի դեկլարացիայի առթիվ որոշման մեջ, որը համագումարի նախագահության անունից հրապարակեց հունգար կոմունիստ Բելա Կունը, հայտարարվում էր, որ «համագումարը անհրաժեշտ է գտնում հատուկ զգուշություն հանդես բերել շարժման այն առաջնորդների նկատմամբ, որոնք անցյալում սպանդանոց են առաջնորդել թուրք գյուղացիներին ու բանվորներին՝ հանուն մեկ իմպերիալիստական խմբավորման շահերի և այդպիսով Թուրքիայի աշխատավորական զանգվածներին հանգեցրել են կրկնակի կործանման՝ հարուստների և բարձր սպայության փոքր խմբի շահերի համար»:

Իսկ ազգային և գաղութային հարցերի վերաբերյալ զեկուցման մեջ, որով համագումարում հանդես եկավ Մ.Պավլովիչը /Վելտման/, նշվում էր, որ «ենվեր փաշայի Թուրքիան դաշինք կնքեց Գերմանիայի, այն նույն

Վիլհելմի հետ, որը հռչակեց Արևմուտքի բուրժուական ժողովուրդների միավորման անհրաժեշտությունը՝ Արևելքի դեմ պատերազմ մղելու համար, և որ Բրեստի կոնֆերանսում թուրքական ներկայացուցիչների վարքագիծը գայրացուցիչ էր, և թուրք նացիոնալիստները չբավարարվեցին Բրեստի հրեշավոր հաշտության պայմաններով ու գրավեցին Արդահանը, Կարսը, Բաթումը և ապա հասան մինչև Բաքու: Ընդ որում հատուկ ընդգծվում էր, որ Բաքվում թուրքական երկամսյա տիրապետությունը բազմաչարչար քաղաքի պատմության ամենամռայլ էջն էր, քաղաք, որը պրոլետարիայի պատվարն էր Կովկասում»:

Այդպես որ, եզրակացնում է Ռ.Ղազանջյանը, ինչպես տեսնում ենք, էնվերը չի խաղացել և նշված հանգամանքներում չէր կարող առաջատար դեր խաղալ համագումարում, և վերջինս էլ չէր գնում նրա հետևից:

Չափազանց հետաքրքրական է Ռ.Ղազանջյանի նաև այն հաղորդումը, որ նշված իրադարձություններից շատ տարիներ անց Արևելքի ժողովուրդների համագումարի կազմակերպիչներից ու ակտիվ մասնակիցներից մեկը՝ Ելենա Ստասովան, 1957թ. հոկտեմբերի 10-ին նամակ է գրել իրեն, երբ ինքը դեռ Երևանի պետական համալսարանի ուսանող էր, որտեղ նշել է, որ համագումարում ձեռք առնված միջոցների շնորհիվ էնվերին գրկեցին իրենց դեմ ուղղված զենքը գործի դնելու հնարավորությունից:

Այնուհետև Ռ.Ղազանջյանն ավելացնում է, որ Արևելքի ժողովուրդների համագումարն իր որոշումներում հաստատագրեց, որ «Չամազգային հեղափոխական շարժումը թուրքիայում ուղղված է միայն օտարերկրյա շահագործողների դեմ, և նրա հաջողությունը դեռևս չէր նշանակելու թուրք գյուղացիների ու բանվորների ազատագրումն ամեն տեսակի ճնշումից ու շահագործումից: Այդ շարժման հաջողությունը իր հետ չէր բերելու թուրք աշխատավորության համար ամենակարևոր՝ ազրարային և ազգային հարցերի լուծում և չէր վերացնելու Արևելքի ազատագրման ամենազխտավոր խոչընդոտները՝ ազգային գժտությունները»:

Վերը շարադրվածի հիման վրա Ռ.Ղազանջյանը հանգում է այն կարևոր եզրակացության, որ այդ ամենը բացառում են այն վարկածը, թե իբր

Արևելքի ժողովուրդների համագումարում ստեղծվեց խորհրդա-թուրքական բլոկ ընդդեմ Չայաստանի, կամ իբր համագումարն ուներ հակահայկական ուղղվածություն: Ավելին, շարունակում է նա, ինչպես վկայում են համագումարի հրապարակված և չհրապարակված փաստաթղթերը, Չայաստանի մասին հարցն ընդհանրապես դրված չէր համագումարում, այլ այն ուրիշ օրինակների հետ միասին ծառայել է իբրև իլյուստրացիոն նյութ մի շարք պատգամավորների զեկուցումներում ու ելույթներում:

Հոդվածն ավարտվում է Ա.Էնշտեյնի և Լ.Ինֆելդի խոսքերով. «Գիտության մեջ կարևոր է հրաժարվել անքննադատ կրկնվող նախապաշարումներից»:

2. Ռեն Ղազանջյան. Վերստին 1921 թվականին Ռուսաստանի կողմից ռուս-թուրքական պայմանագրի ստորագրման հարցի շուրջ /Մոսկովյան արխիվների նախկին գաղտնի փաստաթղթերի լույսի տակ/

**/Թուրքագիտական և օսմանագիտական
հետազոտություններ, հատոր 4, Երևան, 2006/**

1921թ. ռուս-թուրքական պայմանագիրը, հատկապես հայ-թուրքական սահմանագծի մասով, առ այսօր և մեզանում, և արտասահմանում արժանանում է տարբեր, հաճախ էլ իրարամերժ գնահատականների:

Տասնամյակներ շարունակ Մոսկովյան արխիվների նյութերի, այդ թվում այն ժամանակների գաղտնի փաստաթղթերի, հատկապես խորհրդային պետության ղեկավարների ներքին նամակագրության ուսումնասիրությունը ի հայտ է բերել մի ամբողջ շարք նոր փաստեր, առանց որոնց իմացության և հաշվառման, հեղինակի կարծիքով, հնարավոր չէ ճիշտ

գնահատել ինչպես ամբողջ Պայմանագիրը, այնպես էլ, մասնավորապես, այն պատճառները, որոնք ՌԽՖՍՀ-ին հանգեցրին բանակցությունների և Հայաստանի բացակայության պայմաններում հայ-թուրքական այն սահմանի հաստատմանը, որն առկա է այսօր:

Դեռևս քննարկական թուրքիայի ղեկավարությանն ուղղված իր առաջին իսկ ուղերձում ՌԽՖՍՀ արտգործօրդկոմ Գ.Վ.Չիչերինը՝ նրա ղեկավար Զեմալ-փաշայի՝ /Աթաթուրք/ Վ.Ի.Լենինին ուղղված ապրիլի 24/26 դիմումին ի պատասխան 1920թ. հունիսի 2-ին հայտնում էր, որ խորհրդային ղեկավարությունը գոհունակությամբ է նշում «Թուրքահայաստանին սեփական ճակատագիրը ազատ հանրաքվեով տնօրինելու հնարավորություն տալու» մասին որոշումը՝ փախստականների և վտարանդիների մասնակցությամբ, որոնք ժամանակին իրենց կամքից անկախ պատճառներով հարկադրված են եղել թողնել իրենց հայրենիքը:

Ավելին՝ հենց Թուրքահայաստանի մի մասը Հայաստանին տալուց Թուրքիայի հրաժարվելը պատճառ էր, որ ռուս-թուրքական պայմանագիրը չկնքվեց 1920 թվականին: Գ.Վ.Չիչերինը Թուրքիայում ռուսական դեսպան Շ.Ջ.Էլիավային գրում էր. «Մեր միջև տարակարծություններ կան երկու կետերում. մենք չենք ընդունում թուրքական սահմանների որոշումը Թուրքիայի Ազգային ուխտի սկզբունքներով, որը գրեթե վերարտադրում է Բրեստ-Լիտովսկու սահմանները, և մենք պահանջում ենք Թուրքահայաստանի գոնե մի մասի անկախության սկզբունքորեն ճանաչումը, որը բավարար է Թուրքահայաստանի հայ ազգաբնակչության բնակության համար»:

Այս նույնն են հաստատում նաև այն ժամանակների թուրքական աղբյուրները. «Չիչերինը բացահայտորեն հայտարարեց, որ պայմանագիրն ստորագրելու համար թուրքերը պարտավոր են, իբրև պարտադիր պայման, հայերին վերադարձնել Մուշը, Վանը և Բիթլիսը»:

Ռ.Ղազանջյանն ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ Ռուսաստանը պահանջում էր, որ «դաշնակից» Թուրքիան այդ տարածքները հանձնեք բուրժուական Հայաստանին՝ Անտանտի դաշնակցին, որը

որոշակիորեն խոսում էր այն մասին, որ նույնիսկ Հայաստանի անկախության ճանաչումից հետո էլ /1920թ. օգոստոսի 10-ի համաձայնագիրը/ ՌԽՖՍՀ-ը, որպես նախկին Ռուսական կայսրության իրավահաջորդ, իրեն պատասխանատու էր համարում նրա ժողովուրդների, այդ թվում նաև Հայաստանի ճակատագրի համար, թեկուզ և միասնական քաղաքական դաշտ կամ խորհրդայնացման հեռանկարներ ստեղծելու նպատակով՝ անհարաբերաբար:

Այդ գործընթացը ժամանակավորապես դադարեցվեց Հայաստանի վրա թուրքական զորքերի հարձակմամբ /սեպտեմբերի 28 - դեկտեմբերի 2, 1920թ./, որոնք, ի դեպ, գործում էին Ռուսաստանի հետ ցամաքային կապ հաստատելու և Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու հերյուրված պատրվակի տակ, ինչը, սակայն, բացասաբար ընդունվեց ռուսական ղեկավարության կողմից: Համենայն դեպս դեռևս սեպտեմբերի 17-ին քննարկաներին առաջարկվեց «հրաժարվել նման գործողություններից», իսկ հոկտեմբերի 5-ին, այսինքն պատերազմի առաջին իսկ օրերին, Անդրկովկասում ռուսական ներկայացուցիչներին ցուցում տրվեց այն մասին, որ «Հայաստանը վերջին շրջանում ավելի ու ավելի է վերածվում Անտանտի հարձակողական քաղաքականության գործիքի, բայց մենք չենք կարող թույլ տալ նրան խեղդել», իսկ նույններին Հայաստանի ղեկավարությանն առաջարկվեցին զինված օգնություն և միջնորդություն, որոնցից նա հրաժարվեց՝ ապավինելով Արևմուտքին և այլ պատճառներով:

Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին Ռ.Ղազանջյանը գրում է. «1920թ. դեկտեմբերի 2-ին իշխանությունը հանձնելով հայ կոմունիստներին, Հայաստանի հին կառավարությունը գաղտնաբար կնքեց Ալեքսանդրապոլում Հայաստանի համար ստրկական մի պայմանագիր Թուրքիայի հետ, երբ դրա անհրաժեշտությունն ամենևին չկար, որի համաձայն թուրքերի կողմից օկուպացված բուրժուական /այսպես կոչված Ռուսական, իսկ այժմ արդեն՝ խորհրդային/ Հայաստանի տարածքները հայտարարվեցին «Թուրքիային զիջված»՝ որպես «Թուրքիայի հետ անվիճելիորեն պատմական, էթնիկական և իրավաբանական կապ ունեցող», ինչպես նաև

ստանում էր «Հայաստանի Հանրապետության տարածքում ռազմական միջոցառումներ ձեռնարկելու», իր ցանկությամբ «վերահսկողություն և հետաքննություն» անցկացնելու իրավունք և այլն:

Այնուհետև Ռ.Ղազանջյանը կատարում է հետևյալ չափազանց կարևոր հետևությունը. «Այդ պատճառով, բնական էր, որ տառաջիորեն Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման առաջին օրերից /1920թ. նոյեմբերի 29 - դեկտեմբերի 2/ Ռուսաստանի առջև պետք է կանգնեին առաջին հերթին թուրքիայի կողմից օկուպացված տարածքների վերադարձման և Ալեքսանդրապոլի ստրկական պայմանագրի չեղյալ հայտարարման հարցը, ինչը դարձնում էր խորհրդային կողմի համար ամենտաձգելի խնդիր դարձավ նոր ռուս-թուրքական կոնֆերանսի հրավիրումը»:

«Հայաստանի խորհրդայնացումը կատարելապես փոխում է դրությունը: Հասկանում են դա թուրքերը,-հարցնում էր Գ.Վ.Չիչերինը 1920թ. դեկտեմբերի 4-ին Գ.Վ.Օրջոնիկիձեին ուղարկած հեռագրում»: Իսկ ավելի շուտ՝ դեկտեմբերի 1-ին Ի.Վ.Ստալինը հաղորդում էր Գ.Վ.Օրջոնիկիձեին ռուսական միջնորդական առաքելության ղեկավար Պ.Գ.Մդիվանուն փոխանցելու համար. «Մենք որոշեցինք համաձայնել պայմանագիր կնքելուն, հանձնաժողով ուղարկում ենք, Չիչերինի նուտան կատանաս: Հարկավոր է թուրքերին կանգնեցնել դեպի Բաթում շարժվելուց, քեմալականները պետք է ճանաչեն Հայաստանի անկախությունը, առայժմ չի կարելի նրանց վստահել, նրանք մեծ խորամանկներ են: Այդպիսին է Քաղբյուրոյի որոշումը»:

Մեջբերումներ կատարելով ևս մի քանի ուրիշ փաստաթղթերից, Ռ.Ղազանջյանը եզրակացնում է. «Այսպիսով, բերված փաստաթղթերից հետևում է, որ 1920թ. դեկտեմբերի դրությամբ, երբ ՌԽՖՍՀ կառավարությունը առաջարկեց հրավիրել երկրորդ խորհրդա-թուրքական կոնֆերանս՝ տարածքային հարցերը լուծելու համար, նա մտադրություն չունեին զոհաբերել հայկական տարածքները և թուրքիային տարածքային զիջումներ կատարել ոչ հանուն «բարեկամության և եղբայրության», ոչ էլ հանուն «համաշխարհային հեղափոխության», որի մասին, ի դեպ, իշխանության վերին

էշելոններում, ի տարբերություն կառավարման համակարգի միջին օղակների, այդ ժամանակներում արդեն չէին հիշում՝ նրա անիրագործելիության պատճառով: Ինչ վերաբերում է ռուսական կառավարության դիրքորոշմանը՝ Կարսի օկուպացված մարզը ժամանակավորապես թուրքերի ձեռքում թողնելուն, ապա այդ հանգամանքը, ինչպես վկայում է 1920թ. դեկտեմբերի 14-ին Լենինին տված Չիչերինի պատասխանը, պայմանավորված էր Կովկասում ռուսական զորքերի փոքրաքանակությամբ ու թուլությամբ: «Դուք գիտեք,-գրել է Չիչերինը,-որ թուրքերին զենք տալը մենք կապել ենք նրանց՝ Արփաչայից այն կողմ նահանջելու հետ: Մենք ավելին կարող էինք անել միայն այն դեպքում, երբ հնարավոր համարվեր Հայաստան ուղարկել ավելի շատ զորք»: Մյուս կողմից՝ Մոսկվայում վախենում էին, և ոչ առանց հիմքի, որ չափից դուրս պահանջների դեպքում կոնֆերանսը կձախողվի և նույնիսկ ավելին՝ «եթե մենք վանենք թուրքերին, նրանք կնետվեն ԱՄՆ-տանտի գիրկը... Թուրքիայի հետ խաղաղ համաձայնությունը միայն մեզ կազատի Կովկասում հավերժական պատերազմներից»:

Ռ.Ղազանջյանը չափազանց կարևոր ու հետաքրքրական փաստեր է ներկայացնում ռուս-թուրքական կոնֆերանսի նախապատրաստման մասին: Նա գրում է, որ այդ բարդ պայմաններում, այնուամենայնիվ, հաջողվեց հասնել թուրքիայի համաձայնությանը՝ նստելու բանակցությունների սեղանի շուրջ, և դեկտեմբերի 9-ին ՌԽՖՍՀ կառավարությունը հայտնեց թուրքական կողմին, որ ինքը կոնֆերանսին իբրև լիիրավ մասնակիցների հրավիրել է նաև Հայկական և Ադրբեջանական ԽՍՀ-ներին /վերջին դեպքում նկատի էր առնվում, որ «իրենք՝ մուսուլմանները ավելի լավ կարող են ազդել միմյանց վրա հաշտարար կերպով»/:

Միաժամանակ հաղորդվեց, որ «հաշտությունը Հայաստանի և թուրքիայի միջև պիտի լինի հաշտություն՝ հիմնված ժողովուրդների ինքնորոշման վրա»: Բացի այդ, նախատեսվում էր վերստին բարձրացնել «Թուրքահայաստանի անհրաժեշտ մասը» հայերին վերադարձնելու հարցը և հրաժարվել թուրքիայի ծրագրային փաստաթուղթը՝ Ազգային ուխտը /դաշինքը/ ճանաչելուց: Ի դեպ Չիչերինը դեռ 1920թ. օգոստոսին ապագա

ռուս-թուրքական պայմանագրի համաձայնեցված նախագծի օրինակի վրա ընդգծել էր Ազգային ուխտի վերաբերյալ պարբերությունը և նրա դիմաց լուսանցքում գրել՝ «Մերժում ենք»:

Թուրքերն իրենց հերթին թուրքերը պայման դրեցին, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի վերաբերյալ հարցը կարող է «Մոսկվայում հնարավոր քննարկումների առարկա դառնալ միայն «հայերի նվազագույն մասնակցության դեպքում» և որ «թուրքական արևելյան նահանգներից» ինչ-որ մասեր Չայաստանին վերադարձնելը, որոնց տակ հասկացվում էին Ալեքսանդրապոլի պայմանագրով թուրքական օկուպացիայի հետևանքով Թուրքիային անցած հայկական տարածքները, «ոչ մի դեպքում չի կարող ոչ քննարկվել, ոչ էլ ընդունվել Անկարայի ազգային կառավարության կողմից», և նույնիսկ ավելին՝ «ի վերուստ որոշված և հաստատված սահմանների վերաբերյալ ամեն տեսակի պահանջներն ու ակնկալիքները, որոնք նշված են վերոհիշյալ պայմանագրում, կարող են ծառայել միայն նախկին գժտությունների վերականգնմանը»:

Ռ.Ղազանջյանը նշում է, որ թուրքական պատվիրակությունը Մոսկվա ժամանեց 1921թ. փետրվարի 18-ին, Ռուսաստանի համար ամենամահարմար ժամանակ, երբ առկա էր պարենային և վառելիքային ճգնաժամի պայթյուն, որը բանվորական ապստամբությունների էր հանգեցրել մի շարք խոշոր կենտրոններում, խռովություն կրոնշտադտում, ՌիսթՍՅ-ի դեմ պատերազմի նախապատրաստում արտասահմանից: Ընդ որում խորհրդային կառավարությունը մտավախություն ուներ, որ այդ պատերազմին կարող էր մասնակցել նաև քեմալական Թուրքիան՝ մենշևիկյան Վրաստանի հետ դաշնակցած:

«Ի լրումն դժբախտությունների,- շարունակում է Ռ.Ղազանջյանը,- նույն թվականի փետրվարին Չայաստանի տարածքի մի մասում խորհրդային իշխանությունը ժամանակավորապես ընկավ, և իշխանությունն իր ձեռքը վերցրած «Չայրենիքի փրկության կոմիտեի» նախագահ, նախորդ բուրժուական հանրապետության վերջին վարչապետ Ս.Վրացյանը պաշտոնապես ծանուցեց աշխարհին, որ կոնֆերանսին ժամանած Չայկական ԽՍՀ պատ-

վիրակությունը զրկվում է թուրքերի հետ բանակցություններ վարելու իրավունքից: Օգտվելով դրանից, վերջիններս հայտարարեցին, որ բանակցությունների սեղանի շուրջ չեն նստի Չայկական ԽՍՀ պատվիրակության հետ և նույնիսկ ավելին՝ կտրականապես պահանջեցին ռուսական պատվիրակության կազմից հանել նրա ղեկավարի տեղակալ, ՌիսթՍՅ արտաքին գործերի ժողկոմի նախագահի տեղակալ, հայազգի Լ.Մ.Կարախանին»:

Ռ.Ղազանջյանի կարծիքով ցանկանալով ինչ գնով ուզում է լինի հասնել Ալեքսանդրապոլի ստրկական պայմանագրի վերացմանը և պայմանագիր ստորագրել Թուրքիայի հետ, որպեսզի իրեն և անդրկովկասյան խորհրդային հանրապետություններին անջրպետի արտաքին ոտնձգություններից, ՌիսթՍՅ կառավարությունը հարկադրված էր ընդունել իր համար այդքան ստորացուցիչ թուրքական վերջնագիրը: Այդ պատճառով կոնֆերանսը քառակողմից վերածվեց երկկողմի՝ ռուս-թուրքականի, քանի որ ՌիսթՍՅ-ը առաջարկեց, որ Ադրբեջանն էլ այս դեպքում չմասնակցի, իսկ ռուսական պատվիրակության կազմում Կարախանը փոխարինվեց դաղստանցի ճանաչված պետական գործիչ, ՉԿԳԿ անդամ Ջելալեդդին Կորկմասովով:

Սակայն կոնֆերանսի պաշտոնական բացումից /1921թ. փետրվարի 26/ հետո էլ նրա աշխատանքը շուրջ երկու շաբաթով՝ մինչև մարտի 10-ը, ընդհատվեց՝ թուրքերի անհանդուրժողական կեցվածքի պատճառով:

Ինչպես վկայում է Չիչերինը՝ Պ.Գ.Մդիվանուն գրած մարտի 4-ի մամուլում, Մոսկվա ժամանելուն պես թուրքական պատվիրակությունը սկսեց Ազգային ուխտի և Ալեքսանդրապոլի պայմանագրի անձեռնմխելիության պահանջներից, որը ռուսական ղեկավարության կողմից գնահատվեց իբրև «չափից դուրս հավակնություններ» և պահանջ վերադարձնել Թուրքիային Բաթումն ու ամբողջ Չայաստանը՝ մասամբ բացահայտորեն, մասամբ էլ քողարկված ձևով, որը «կատարելապես անընդունելի էր» նրա համար:

Ռ.Ղազանջյանը աներկբայելի փաստերով ցույց է տալիս, որ թուրքերի հետ ցանկացած անհամաձայնություն և Մոսկվայի բանակցություններում նրանց առաջարկությունների մերժումն սպառնում էր ծայր աստիճան վնասակար հետևանքներով. ռուս-թուրքական կոնֆերանսի ծախսողմամբ և

թուրքերի անհապաղ մեկնմամբ՝ Ռուսաստանի կողմից Ազգային ուխտի և Ալեքսանդրապոլի պայմանագրի չընդունման պատճառով /էջ 137/: Այդ նույն փաստաթղթերից մեկում ընդգծվում էր, որ այդ պատճառով հարաբերությունները Թուրքիայի հետ հասել էին նույնիսկ լուրջ ճգնաժամի:

Ճգնաժամն ավելի էր խորանում թուրքերի կողմից միաժամանակ Մոսկվայում բուլշևիկների և Լոնդոնում Անտանտի հետ վարվող զուգահեռ բանակցությունների հետևանքով, քանի որ Լոնդոնում թուրքերը, ի դեպ, ծագում էին հասնել Արևմուտքի կողմից Ալեքսանդրապոլի պայմանագրի ճանաչմանը:

«Դրա համար էլ Թուրքիայի հետ պայմանագրի շուտափույթ ստորագրումը,-գրում է Ռ.Ղազանջյանը, հենվելով Չիչերինի վկայության վրա,- այդ պահին կենսականորեն անհրաժեշտ էր որպես երկու չարիքներից փոքրագույնը խորհրդային հասարակության համար՝ նրա միջազգային մեկուսացման պայմաններում, որը հարկադրաբար պահանջում էր ձեռնարկել անհետաձգելի միջոցառումներ»: Այդ էր պատճառը, որ Չիչերինը իր մի քանի նամակներում նշում էր, որ Լոնդոնի բանակցությունների պայմաններում իրենք պետք է թուրքերի հետ արագ ու անհապաղ վերջացնեն՝ ընդունելով նրանց վերջին առաջարկները, որ տենդագին արագությամբ պետք է մշակել Թուրքիայի հետ պայմանագիրը, ժամանակ չկա երկար քննարկել հողվածների տեքստը: Հարկավոր է ամեն գնով անհապաղ վերջացնել և քաղաքական աշխարհի առջև կանգնել պատրաստի ստորագրված տեքստով:

Նախիջևանի վերաբերյալ հողվածը թուրքերի նույնպես կտրուկ պահանջներից էր, որը ռուսական կողմը ստիպված էր ընդունել, մինչդեռ խորհրդային կառավարությունը պլանավորում էր, որ Նախիջևանը պետք է անմիջականորեն կախված լիներ Ռուսաստանից:

Չիչերինի նամակներից մեկում նշվում է, որ Կարսի և Արդահանի գիջելը թուրքերին նույնպես բավական ծանր զոհողություն էր, քանի որ այդ երկու ամրոցները կազմում են ուժեղ պաշտպանական համակարգ, նաև հարձակման բազիս խորհրդային հանրապետությունների վրա: Սակայն ստիպված էին գնալ նաև դրան:

Սահմանի անցկացումը Արփաչայով և Արաքսով նույնպես արվել է քեմալականների պահանջով: Բացի դրանից, Թուրքիան նաև պահանջում էր, որ իրենց բլոկիաուզները գտնվեին սահմանից 4-8 վերստ հեռավորության վրա, մինչդեռ ՌԽՖՍՀ-ը առաջարկում էր 20 վերստ: Նույնպես Թուրքիայի պահանջով պրեամբուլայում «բարեկամության» բառին ավելացվեց «և եղբայրության» մասին բառերը:

Միայն սահմանի վերաբերյալ նշված բոլոր պահանջներն ընդունելուց հետո թուրքերը համաձայնեցին մարտի 10-ին վերսկսել բանակցությունները:

Ինչպես Չիչերինը գրում էր Լենինին, պայմանագրի յուրաքանչյուր բառը, յուրաքանչյուր ստորակետը երկարատև պայքարի արդյունք էին:

Վերը շարադրվածից ելնելով՝ Ռ.Ղազանջյանը հանգում է այն կարևոր, սկզբունքային նշանակություն ունեցող եզրակացության, որ հայկական տարածքները Թուրքիային «նվիրելու» հարցը չէր կարող բարձրանալ և չի բարձրացվել կոնֆերանսում և ավելին՝ չէր մտնում ՌԽՖՍՀ ծրագրերի մեջ: Այդ է վկայում նաև 1921 թ. փետրվարի 8-ի /թուրքական պատվիրակության՝ Մոսկվա ժամանելուց 10 օր առաջ/ Ռուսաստանի նոտան Թուրքիային, որտեղ ասված էր, որ «Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի տարածքի տակ հասկացվում է այն տարածությունը, որի վրա պետք է տարածվի նրա իշխանությունը՝ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի հիման վրա»:

Դրանից բացի, նույնիսկ այն բանից հետո, երբ պայմանագրի բոլոր հողվածները համաձայնեցված էին կողմերի միջև և այն պատրաստ էր ստորագրման, թուրքերը կտրականապես հրաժարվում էին ստորագրել այն, մինչև որ Ռուսաստանը չտա գրավոր պարտավորություններ, որ Ռուսաստանը մի քանի տարիների ընթացքում կօգնի Թուրքիային զենքով և դրամով՝ տարեկան 10 միլիոն ռուբլի ոսկով /Չիչերինի 1921թ. մարտի 17-ի նամակը Լենինին/, որը մեկ անգամ ևս վկայում է պայմանագրի անհրավա հավասար բնույթի մասին, ինչը Ռեմ Դազանջյանի կարծիքով հիմք կարող է հանդիսանալ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների համար՝ վերանայելու այն:

Ի դեպ, նույն աղբյուրի համաձայն պայմանագիրն ստորագրվել է ոչ թե 1921թ. մարտի 16-ին, ինչպես նշված է նրա տակ, այլ մարտի 18-ին, այսինքն հետին ամսաթվով, որպեսզի Անգլիան չկարողանա ՌԽՖՍՀ-ին մեղադրել նույն թվականի մարտի 16-ին Լոնդոնում կնքված ռուս-անգլիական Առևտրական համաձայնագրի «Ա» կետը խախտելու մեջ:

Ինչպես հետագա շարադրանքում ցույց է տալիս Ռ.Ղազանջյանը, դա առաջին դեպքը չէր, երբ ՌԽՖՍՀ-ը, լինելով միջազգայնորեն մեկուսացված, հարկադրված էր գնալ տարածքային գիշումների, որպեսզի ձախողեր Անտանտի իմպերիալիստների ինտրիգները, որոնք բոլորից շատ էին ձգտում թույլ չտալ խաղաղություն, ինչպես դա եղավ, օրինակ, Լեհաստանի հետ 1920 թ.պայմանագիր ստորագրելիս: «Մեր բոլոր պայմանագրերում,- պարզա-բանում էր ՌԽՖՍՀ քաղաքականությունը Չիչերինը 1921թ. հուլիսի 8-ին Բ.Վ.Լեգրանին ուղարկած նամակում,- ոչ միայն Բրեստի, այլև մեր բոլոր վերջին պայմանագրերում մենք առանձին տեղավայրերի նկատմամբ խախտում էինք ազգերի ինքնորոշման սկզբունքը: Մենք էստոնիային տվեցինք մաքուր ռուսական պատռիկ, մենք Ֆինլանդիային տվեցինք Պեչենգան, որտեղ բնակչությունը համառորեն դա չէր ցանկանում, մենք չհարցրեցինք Լատգալիային՝ նրան Լիտվային տալիս, մենք Լեհաստանին տվեցինք մաքուր բելոռուսական վայրեր: Այդ ամենը կապված է նրա հետ, որ ներկա ընդհանուր իրադրության մեջ, Խորհրդային Չանրապետության՝ կապիտալիստական շրջապատի դեմ պայքարի պայմաններում, գերագույն սկզբունք է հանդիսանում Խորհրդային Չանրապետության ինքնապահպանումը: Այդ գերագույն սկզբունքի համար հարկ է լինում գնալ պայմանագրերի ստորագրմանը բուրժուական պետությունների հետ, որոնցում մեր սկզբունքները չեն իրագործվում» /էջ 139-140/:

Հոդվածի վերջում Ռ.Ղազանջյանն անդրադառնում է Ստալինի դերին 2-րդ ռուս-թուրքական մոսկովյան կոնֆերանսում սահմանների վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Սովորաբար այդ մասին խոսելիս որպես կանոն վկայակոչում են 1921թ. փետրվարի 12-ի Ստալինի երկտողը Լենինին, որտեղ ասված է. «Ես միայն երեկ իմացա, որ Չիչերինն իրոք ինչ-որ

ժամանակ ուղարկել է հիմար /և պրովոկացիոն/ պահանջ՝ Վանը, Մուշը և Բիթլիսը /թուրքերի հսկայական մեծամասնությամբ թուրքական նահանգներ/ Չայաստանի օգտին մաքրելու մասին: Այդ հայկական-իմպերիալիստական պահանջը չի կարող մեր պահանջը լինել: Անհրաժեշտ է արգելել Չիչերինին՝ ազգայնամուլորեն տրամադրված հայերի թելադրանքով թուրքերին նոտաներ ուղարկել»:

Այնուհետև, զարգացնելով իր դատողությունները տվյալ հարցի շուրջ՝ Ռ.Ղազանջյանը գրում է, որ եթե անգամ մի պահ ընդունենք /չնայած նման բան տվյալ դեպքում բացառվում է/, թե Ստալինին ոչինչ հայտնի չէր այն մասին, որ 1920թ. օգոստոսին, Մոսկվայում ռուս-թուրքական առաջին բանակցությունների ժամանակ Չիչերինը բացահայտորեն հայտարարել էր, որ պայմանագիրն ստորագրելու համար թուրքերը պարտավոր են, իբրև պարտադիր պայման, այն ժամանակ դեռ բուրժուական Չայաստանին տալ Մուշը, Վանը և Բիթլիսը, ապա նա նույն թվականի նոյեմբերի առաջին կեսին, անշուշտ, արդեն գիտեր Չիչերինի այդ պահանջի մասին՝ վերջինիս հենց իրեն ուղղված մի շարք նամակներից ու հեռագրերից /թերվում են այդ հեռագրերի ու նամակների համապատասխան տողերը/:

Եվ այդ ամբողջ ժամանակ ոչ մի անգամ Ստալինի կողմից բացասական ռեակցիա չի եղել: Ընդհակառակը՝ նա համաձայն է եղել այդ հարցերի շուրջ խառը հանձնաժողով կազմելուն և նույնիսկ այդ մասին համապատասխան ցուցում է տվել ռուսական միջնորդական առաքելության ղեկավար Պ.Մդի-վանուն /էջ 141/:

«Եվ վերջապես,- շարունակում է հոդվածագիրը,- նույնիսկ ամենահեռավոր կերպով «հայատյացություն» կամ «թուրքասիրություն» չես անվանի Ստալինի կարգադրությունը՝ Օրջոնիկիձեին ուղղված 1921թ. ապրիլի 9-ի հեռագրում. «Առաջին. Ալեքսանդրապոլը ամեն գնով պետք է մաքրվի, Կարաբեքիրի խուլիգանությունը պետք է ոչնչացնել արմատից»:

Վերը ասվածից Ռ.Ղազանջյանը հետևություն է անում, որ Ստալինի 1921թ. փետրվարի 12-ի վերը հիշատակված երկտողը Լենինին ոչ թե նրա «հայատյացության» արդյունք էր, այլ պայմանավորված էր այն կոնկրետ

պայմաններով, երբ նման պահանջը կարող էր դառնալ 2-րդ խորհրդաթուրքական կոնֆերանսի ծախողման պատճառ:

Այդ առիթով Ռ.Ղազանջյանը կատարում է մի չափազանց կարևոր պարզաբանում. նա ցույց է տալիս, որ այդ երկտողը գրված էր Օրջոնիկիձեի՝ Լենինին, Տրոցկուն, Ստալինին և Չիչերինին հասցեագրված փետրվարի 9-ի հեռագրի վրա, որը Մոսկվայում ստացվել էր փետրվարի 11-ին: Հեռագրում մասնավորապես ասված էր. «Իրադրությունը Թուրքիայում եղած տեղեկությունների համաձայն այսպիսին է. Մուշի-Վանի-Բիթլիսի վերաբերյալ Չիչերինի պահանջը միանգամից ուժեղացրել է Անտանտի կողմնակիցներին, և Մուստաֆա Քեմալը սկսել է Կոստանդնուպոլիսին՝ Անտանտին մերժեմալու ուղիներ որոնել... Որևէ կասկածից դուրս է, որ Մուշի, Վանի և Բիթլիսի պահանջները կօգտագործվեն մեր վերաբերմունքը թուրքերի նկատմամբ ցուցադրելու համար, ուստի բոլոր նման բնույթի պահանջները պետք է հանվեն ու պետք է կնքվի պայմանագիր, որը պետք է կրի բացառապես ազիտացիոն բնույթ, որպեսզի մեր հակառակորդները զրկվեն պրովոկացիաների դիմելու հնարավորությունից» /էջ 142/:

Ինչ վերաբերում է Մոսկովյան 2-րդ ռուս-թուրքական կոնֆերանսի ժամանակ բանակցությունների գործընթացին Ստալինի մասնակցությամբ, ապա հողավածագրի հավաստմամբ բազմաթիվ փաստաթղթերը վկայում են, որ այն կրել է ոչ ավելին, քան կարծաժամկետ ու էպիզոդիկ բնույթ: Ժամանակի բառացիորեն բոլոր փաստաթղթերը վկայում են այն մասին, որ 1921-ին, ինչպես նաև 1920-ին բանակցությունները թուրքական պատվիրակության հետ սկզբից մինչև վերջ վարել է Գ.Վ.Չիչերինը:

Հողվածի վերջում Ռ.Ղազանջյանը հավելում է, որ ճիշտ է, գոյություն ունեն նաև թուրք գործիչների մի շարք հիշողություններ, որոնք, հրատարակված լինելով արդեն Ստալինի մահից հետո, գոյություն ունեցող փաստերին հակառակ, փորձում են «ապացուցել», թե իբր 1921թ. Մոսկովյան բանակցություններում հայկական տարածքները Թուրքիային անցան Ստալինի շնորհիվ, այսինքն նպատակ ունեն արդարացնել դրանց գտնվելը Թուրքիայի կազմում: Այդ դեպքում, ինչպես 1945-ին Բեռլինի /Պոտսդամի/

դաշնակից երեք տերությունների կոնֆերանսում հենց Ի.Վ.Ստալինը, խոսելով «Կարսի շրջանի, որը մինչև պատերազմը գտնվում էր Հայաստանի կազմում», հարց բարձրացրեց «սահմանը վերականգնելու մասին, որը գոյություն ուներ մինչև առաջին համաշխարհային պատերազմը», միաժամանակ հայտարարելով, որ «մենք գտնում ենք, որ սահմանը Կարսի և Արդահանի շրջանում ճիշտ չէ, և մենք հայտարարել ենք Թուրքիային, որ եթե նրանք ցանկանում են մեզ հետ դաշինք կնքել, անհրաժեշտ է ուղղել սահմանը, իսկ եթե նա չի ցանկանում ուղղել սահմանը, ապա դաշինքի հարցը դուրս է գալիս»: Իսկ խորհրդային պատվիրակության անդամ Վ.Մ.Մոլոտովն իր հերթին նույն կոնֆերանսում հայտարարեց, որ «1921 թվականին թուրքերն օգտվեցին խորհրդային պետության թուլությունից և նրանից խլեցին խորհրդային Հայաստանի մի մասը, և ապա արձանագրության մեջ հաստատագրված է. «Մոլոտովն ասում է, որ տարածքը, որի մասին խոսք է գնում, չի պատկանում թուրքերին: Նրանք անարդարացի են վարվել՝ խլելով այն խորհրդային Միությունից»: Եվ այդ ամենը այն ժամանակ թուրքական կողմից ոչ մի անգամ չի ժխտվել, նույնիսկ ակնարկ չի արվել Ստալինի կամ մեկ ուրիշի կողմից «նվիրատվության» մասին:

Այսպիսին են Ռեմ Ղազանջյանի կողմից բազմամյա արխիվային պրպտումների արդյունքները, որոնք լույս են սփռում քննարկվող հիմնահարցերի վրա:

[Բնագրում հողվածի վերջում բերվում են բազմաթիվ աղբյուրներ, հաստատող վերոբերյալը]:

3. Ռեմ Ղազանջյան. «Եղել է, արդյոք, Ստալինը հայատյաց /ինչի մասին են խոսում փաստերը/»

«Մեզիս ինձորն /ժամանակակից հասարակության նորագույն պատմություն/» հանդեսի 2007թ. թիվ 1-ում հրատարակված է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, դոցենտ Ռեմ Ղազանջյանի վերոհիշյալ վերնագրով հողվածը, որը չափազանց կարևոր է հայոց նորա-

գույն պատմության մի շարք կնճռոտ հարցեր ճշմարտացիորեն լուսաբանելու տեսակետից:

Տազնապալի մտորումների տեղիք է տալիս հողվածագրի այն միտքը, թե դեռ երբեք բուլշևիզմի, ԽՍՀՄ, Խորհրդային Չայաստանի և այլ նախկին խորհրդային համրապետությունների պատմությունն այդքան չի խեղաթյուրվել, ինչպես վերջին ոչ լրիվ երկու տասնամյակներում: Արդեն Լենինն էլ ավելին չէ, քան «բուլշևիկյան կողոպտիչների գաղափարախոսն և ոգեշնչողը», «կեղծ տեսաբան» /և դա ասում է շարքային գրչակը, որի մտքի ամենամշանավոր նվաճումը նշված բառերն են/, լեզենդար Կամոն՝ «կողոպտիչ բանդայի գործադիր պարագլուխ, ռեցիդիվիստ», իսկ Ստալինը՝ «կոմկասյան կողոպտիչների ղեկավար»: Եվ ոչ մի «լուսավոր շող խավարի թագավորությունում», ոչ մի դրական բիծ պատմագրության մեջ՝ թեկուզ բացառության կարգով: Միայն համատարած կեղտ բուր 70 տարիների վրա՝ միասին վերցրած՝ «Չայաստանի անդամահատումը՝ 1920-1921թթ. խորհրդա-թուրքական ագրեսիայի արդյունքում»:

Ի պատասխան այն կեղծիքի, թե իբր Բրեստում բուլշևիկները թուրքերին «նվիրեցին» հայկական տարածքները, Ռ.Ղազանջյանը բառացիորեն ներկա-յացնում է Ազգությունների գործերի ժողկոմ Ի.Վ.Ստալինի 1918թ. մարտի 16-ի թիվ 325 շրջաբերականը՝ ստորագրված Բրեստի հաշտության վավերացման հաջորդ իսկ օրը, որտեղ ասված էր. «Սույնով հայտարարվում է ի գիտություն Չեղափոխական շտաբներին, Խորհուրդներին և այլ խորհրդային հիմնարկներին, որ Չայկական Չեղափոխական Կազմակերպությունները իրավունք ունեն ազատորեն ձևավորել հայկական կամավորական ջոկատներ և հարկ դնել հայկական բուրժուազիայի վրա՝ վերջիններիս ֆինանսավորման նպատակով: Հիշատակված խորհրդային հաստատություններին պարտավորեցվում է խոչընդոտներ չհարուցել այդ ջոկատների տեղաշարժերին դեպի Չայաստան, որոնք կոչված են պաշտպանելու իրենց Չայրենիքը թուրք-գերմանական բռնադատիչներից»: Այս փաստը, պարզաբանում է հողվածագիրը, հատկապես հատկանշական է, եթե հաշվի առնենք, որ 1918թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի Լրացուցիչ ռուս-թուր-

քական պայմանագրի համաձայն Ռուսաստանը պարտավորվում էր անհապաղ ցրել իր տարածքում գոյություն ունեցող բուր և հայկական կամավորական ջոկատները:

Ընթերցողին տեղեկացվում է նաև, որ սույն փաստաթուղթը 1956-ին հողվածագրին է տրամադրել նրա քեռին՝ Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր Տիրան Տիգրանի Ղազանջյանը, որն իր հերթին այն ստացել էր իր հորից՝ հայտնի հնչակյան գործիչ, Չայկական 6-րդ կամավորական ջոկատի հրամանատարի տեղակալ Տիգրան Պավելի /Պողոսի/ Ղազանջյանից: Տեղեկանում ենք նաև, որ Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության պետական արխիվի /ՌՍԶՊ/ Ստալինի ֆոնդում /ֆոնդ 558/ պահվում է տվյալ փաստաթղթի պատճենից պատճենահանված ձեռագիր օրինակը: Այլ օրինակներ, ըստ երևույթին, չեն պահպանվել: Ի տարբերություն դրան, հողվածում տպագրված է փաստաթղթի վավերացված այն ժամանակի կլոր կնիքով պատճենի լուսանկարը:

Շարունակելով միտքը, հողվածագիրն այնուհետև ավելացնում է, որ, այնուամենայնիվ, Ստալինին և միաժամանակ ամբողջ լենինյան ղեկավարությանը «հայատյացության» և այլ կատարած ու չկատարած և նույնիսկ չպլանավորած մեղքերի մեջ մեղադրելը ներկայումս դարձել է չափազանց մոդայիկ, ինչ-որ իմաստով նույնիսկ «եկամտաբեր», «լավ տոնի» նշան: Ժամանակ առ ժամանակ բանը հասնում է լիակատար անհեթեթության: Օրի-նակ՝ ինչ-որ մեկը Պարվուսին համարում է Լենինից հետո երկրորդ մարդը, որը ձևավորել է բուլշևիկյան պետության քաղաքականությունը Չայկական հարցում՝ այն Պարվուսին, որին Լենինը դեռ 1905-ին անվանել է «ношляк», «решетом» և արգելել նրա մուտքը խորհրդային Ռուսաստան:

Ռ.Ղազանջյանը տխմարություն է համարում տարածվող այն մտայնությունը, թե իբր նոր կազմավորված խորհրդային պետությունը պայքար էր կազմակերպում հայերի դեմ: «Իսկ մենք, դմբներս,- հեզմանքով շարունակում է հողվածագիրը,-մինչև հիմա չգիտեինք, որ հանդիսանում ենք, բանից պարզվում է, համարյա թե երկրագնդի կենտրոնը, որի դեմ կենտրոնը իրեն

գործը թողած, պայքար էր մղում: Նաև ասում են, որ մենք ենք «բեղմնավորել» /зачаಲು/ աշխարհի մնացած ժողովուրդներին»:

«Ներկայումս ինչեր ասես չեն վերագրում Ստալինին,- գրում է Ռեն Ղազանջյանը: Նա և ցարական պահնորդության գործակալ է, և թուրքական գործակալ, և մուսավաթական և նույնիսկ՝ սեփական աչքերիս չհավատացի, երբ կարդացի՝ դաշնակցության գործակալ: Ընտրիր ով ինչ ուզում է՝ ճաշակի հարց է: Կարող ենք անգամ լրիվ վերցնել սպառազինվելու համար...

Իսկ թե ինչու է այդ «հայատյաց» Ստալինը իրեն քարտուղար վերցնում հայ Նազարեթյանին, կամ բարեկամություն անում հայերի հետ /Միկոյան և ուրիշներ/, գիտությունը, թանկագին ընթերցող, բացատրել չի կարող»:

Սովորաբար, խոսելով Ստալինի «հայատյացության» մասին, վկայակոչում են նրա՝ Լենինին հասցեագրված 1921թ. փետրվարի 12-ի գրությունը, որը ներկայացվում է ամբողջությամբ. «Ընկեր Լենին, ես միայն երեկ իմացա, որ Չիչերինը իրոք ինչ-որ ժամանակ թուրքերին է ուղարկել հիմար /և պրովոկացիոն/ պահանջ՝ Վանը, Մուշը և Բիթլիսը /թուրքական նահանգներ՝ թուրքերի հսկայական մեծամասնությամբ/ Հայաստանի օգտին մաքրելու մասին: Այդ հայկական-իմպերիալիստական պահանջը չի կարող մեր պահանջը լինել, հարկավոր է Չիչերինին արգելել ազգայնամուտորեն տրամադրված հայերի թելադրանքով թուրքերին նոտաներ ուղարկելը»:

Այնուհետև հողվածագիրը պարզաբանում է, որ այդ մասին 1921-ին գրել է ոչ միայն Ստալինը, այլև ուրիշները, ընդ որում և նրանից առաջ, և նրանից հետո, և նրանից անկախ: Օրինակ՝ Մոխիվանին՝ հունվարի 20-ին, և Աստախովը՝ փետրվարի 12-ին Թուրքիայի տարբեր քաղաքներից, Կրասինը՝ մարտի 13-ին Լոնդոնից, Օրջոնիկիձեն՝ փետրվարի 9-ին Բաքվից և այլն: Մասնավորապես Ստալինը հենց վերջինիս հեռագրի վրա է գրել վերոհիշյալ գրությունը: Նրանք նշում են քեմալականների լոնդոնյան բանակցությունները Անտանտի երկրների հետ, երբ դրա հետ կապված մոսկովյան բանակցությունների խզման վտանգ առաջացավ, որը կարող էր հանգեցնել Անդրկովկասում թուրքերի կողմից ռազմական գործողություն-

ները վերսկսելուն՝ «1918 թվականի ձևով», երբ թուրքական զորքերը հասան Բաքու: Նման պայմաններում շատերը չմտածված քայլ էին համարում, որը կարող էր պրովոկացիոն դեր խաղալ, խորհրդային կողմի պահանջը՝ Վանը, Մուշը և Բիթլիսը Հայաստանին հանձնելու վերաբերյալ, մասնավորապես, ինչպես նշում էր Չիչերինը ՌԿ/ԲԿ Կետևոմին ուղարկած 1921թ. մարտի 1-ի նամակում, այդ ժամանակ Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունները հասել էին ծայր աստիճան լուրջ կրիտիկական պահի՝ լուրջ ճգնաժամի: Թուրքական պատվիրակությունը հայտարարեց, որ Ազգային ուխտը, ըստ որի Բաթումը, Արդահանը և Կարսը հայտարարվում էին թուրքական, և Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որը Թուրքիային էր տալիս Հայաստանի նշանակալի մասը, իսկ մնացած մասերը փաստորեն վերածվում էին Թուրքիայի վասալ նահանգների, պետք է համարվի անձեռնմխելի:

Մյուս կողմից, հանրահայտ է, որ ոչ միայն 1921-ին, այլև 1920-ին ռուսական կառավարությունը բազմիցս Թուրքիայի առջև հարց էր դրել Արևմտյան Հայաստանի տարածքի մի մասը Հայաստանի բուրժուական պետությանը հանձնելու մասին: Դրանից բացի՝ նույնիսկ Մոսկվայում 1920թ. ամռանը ռուս-թուրքական առաջին բանակցությունների ժամանակ, նաև թուրքական աղբյուրների վկայությամբ, Չիչերինը բացահայտորեն հայտարարեց, որ իբրև Ռուսաստանի՝ Թուրքիայի հետ պայմանագիր կնքելու «պարտադիր պայման», թուրքերը պարտավոր են Հայաստանին տալ Մուշը, Վանը և Բիթլիսը: Եվ տվյալ պահանջը չկատարելու հետևանքով էլ այդ տարի պայմանագիրը չստորագրվեց:

Գիտեր, արդյոք, այդ բոլորի մասին ՌԿ/ԲԿ Կետևոմի Քաղբյուրոյի և ՌԽՖՍՀ Կառավարության անդամ Ի.Վ.Ստալինը: Անպայմանորեն գիտեր: Հատկապես նույն թվականի նոյեմբերի առաջին կեսին, Հայաստանի վրա թուրքական հարձակման ամենաթեժ պահին, Չիչերինը համարյա ամեն մի հեռագրում և նամակում տեղեկացնում էր նրան, որ «խառը հանձնաժողովը մեր մասնակցությամբ... ընդհանրապես պետք է անցկացնի սահմանազատում... հավասար չափով նաև Թուրքական Հայաստանում»: «Մենք մեր

կողմից պետք է պնդենք երկու կետերի վրա, ... երկրորդ՝ Թուրքիայի և Չայաստանի միջև սահմանների վերջնական որոշում ինչպես նախկին Ռուսական, այնպես էլ Թուրքական Չայաստանում» և այլն:

Եվ, այնուամենայնիվ, Մոսկվայում ռուս-թուրքական բանակցությունների նախապատրաստման այդ ամբողջ շրջանում Թուրքահայաստանի վերաբերյալ խորհրդային կողմի պահանջների նկատմամբ չի եղել Ստալինի բացասական արձագանքի ոչ մի դեպք: Այդ պատճառով էլ Ռեն Ղազանջյանը հակված է պնդել, որ Ստալինի այդքան կտրուկ արձագանքը Չիչերինի պահանջների նկատմամբ Լենինին հասցեագրված փետրվարի 12-ի գրության մեջ թելադրված էր վերը նշված համաձայնությունը՝ բազմապատկած նրա կոպիտ բնավորությամբ և կրում էր մասնավոր՝ տվյալ պահին բնորոշ բնույթ: Իսկ ընդհանուր առմամբ Ստալինի դիրքորոշումը տվյալ հարցում չէր կարող այդքան կտրուկ տարբերվել ռուսական պետության քաղաքականությունից:

Մյուս փաստաթուղթը, որը բերվում է գրականության մեջ նույնպես իբրև Ստալինի «հայատյացության» ապացույց, նրա՝ 1920թ. հուլիսի 8-ի հեռագիրն է Օրջոնիկիձեին, որտեղ ասված է հետևյալը. «Իմ կարծիքն այնպիսին է, որ չի կարելի անվերջ տատանվել կողմերի միջև, անհրաժեշտ է որոշակիորեն պաշտպանել կողմերից մեկին, տվյալ դեպքում, իհարկե, Ադրբեջանին՝ Թուրքիայի հետ միասին: Ես խոսել եմ Լենինի հետ, նա չի առարկում»:

Ռ.Ղազանջյանն իրավացի հիմքով գտնում է, որ փաստաթղթից պարզ չէ՝ արդյոք այն կապ ունի հայերի /Չայաստանի/ հետ, թե ոչ: Տվյալ հարցի պատասխան չի պարունակում նաև այն փաստաթուղթը, որի էջի ազատ մասի վրա ինչ-որ մեկի կողմից, հավանաբար Ստալինի թելադրանքով, գրվել է այդ հեռագիրը, որը ուղղվել և լրացվել է նրա կողմից:

Սույն փաստաթղթում հայատյացություն տեսնելու կողմնակիցները իրենց վարկածը հաստատող ոչ մի ապացույցներ չեն բերում, ղեկավարվելով սոսկ ընդհանուր պատեհապաշտությամբ, թե՛ քանի որ Ստալինը «հայատյաց» էր, և հեռագրում խոսվում է «Ադրբեջանին Թուրքիայի հետ»

պաշտպանելու մասին, ապա անպայման հայերի դեմ պետք է ուղղված լինի, ինչը ինքնին չի կարող տվյալ դեպքում իբրև ապացույց ծառայել:

Այնուհետև հողվածագիրը ցույց է տալիս, որ Մոսկվայն անկախ գիտնականները /պատմ. գիտ. թեկնածու Ս.Վ.Կոնստանտինով՝ 2000թ., պրոֆ. Մ.Ա.Պերսից և ուրիշներ/ այլ տեսակետ են պաշտպանում. որ տվյալ փաստա-թուղթը կապված է Պարսկաստանի և Աֆղանստանի իրադարձությունների հետ, որը, նրա կարծիքով, ավելի հավանական է, քանի որ այդ ժամանակ Մոսկվան զբաղված էր Ադրբեջանից և Թուրքիայից կամավորական ջոկատներ կազմավորելով՝ Իրանում հակաիմպերիալիստական շարժմանն աջակցելու նպատակով: Հարցը, այնուամենայնիվ, ըստ հողվածագրի, պահանջում է լրացուցիչ ճշգրտումներ, մինչև որ կհայտնաբերվեն հուլիսի 8-ի հեռագրին նախորդած փաստաթղթեր:

Ասվածի ոչ միայն փաստական, այլև առարկայական աներկմտելի ապացույցն է պատմ. գիտ. թեկնածու Ս.Վ.Կոնստանտինովի «Ստալինը՝ մուսավաթական գործակալ. ճշմարտությունը և հորինվածքները Չայաստանում խորհրդային իշխանության հաստատման պատմության մասին» հողվածի ֆոտո-պատճենը՝ տպագրված «Նեզավիսիմայա զազետայի» 2000թ. դեկտեմբերի 27-ի համարում: Անդրադառնալով այդ տեքստին Ռ.Ղազանջյանը գրում է. «Մեր հողվածի համատեքստում ուշադրություն են գրավում հետևյալ տողերը. «Մոտավորապես այդ նույն ժամանակ համաման որոշումներ են ընդունվում Իրանում և Աֆղանստանում հակաբրիտանական ապստամբական շարժումների կապակցությամբ: 1920թ. հուլիսի 8-ին Ստալինը հեռագրում է Օրջոնիկիձեին՝ «Իմ կարծիքն այնպիսին է, որ չի կարելի անվերջ խուսանավել կողմերի միջև. անհրաժեշտ է որոշակիորեն պաշտպանել նրանցից մեկին. տվյալ դեպքում, իհարկե, Ադրբեջանին Թուրքիայի հետ»:

Հաջորդ փաստաթուղթը, որն իբր հաստատում է, թե Ստալինը եղել է «հայատյաց», Ռ.Կ/բ/Կ Կենտկոմի Կոլբյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշումն է /որին մասնակցել է Ստալինը/ Ղարաբաղը Ադրբեջանին տալու մասին: Սակայն, Ստալինը ներկա էր նաև Կոլբյուրոյի հուլիսի 4-ի երեկոյան

նիստին, որտեղ որոշվեց Ղարաբաղը տալ Հայաստանին, և եթե նա համաձայն չլիներ այդ որոշմանը, կարող էր հենց այդ ժամանակ կանխել նրա ընդունումը՝ չսպասելով հաջորդ նիստին:

Եվ վերջում Ռ.Ղազանջյանը գտնում է, որ Ստալինի «հայատյացության» այլ ապացույցներ չկան: Ծիշտ է, փորձեր եղան Ստալինի անվան հետ կապել 1921թ. մարտի 4-ին «Ժիզն նացիոնալնոստեյ» մոսկովյան թերթում հրապարակված Ա.Սկաչկոյի «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հոդվածի հեղինակ լինելը և մեղադրել նրան, թե իբր նա Չիչերինին հեռացրեց թուրքերի հետ բանակցություններից և «թուրքերին տվեց ոչ միայն Թուրքահայաստանը, այլև Ռուսահայաստանի մեծ մասը»: Սակայն այդ բոլոր փորձերը վերջացան կատարյալ ձախողմամբ /դրանցից մեկի մասին տես Ռ.Ղազանջյանի «Գոլոս Արմենիի» թերթի 2006թ. հոկտեմբերի 26-ի համարում հրապարակված «Ա.Սկաչկոյի ու նրա հոդվածի մասին» հոդվածը/:

«Ես էլ չեմ խոսում այն մասին, - գրում է Ռ.Ղազանջյանը, - որ եթե Ստալինն իրոք հայատյաց էր, ապա ինչպես եք թույլ տալիս հասկանալ, պարոնայք, վերը բերված նրա 1918թ. մարտի 16-ի շրջաբերականը և 1921թ. ապրիլի 9-ի հետևյալ դիրեկտիվը Օրջոնիկիձեին. «Առաջին՝ Ալեքսանդրապոլը պետք է մաքրվի /թուրքական զորքերից - Ռ.Ղ./ եթե ոչ լվանալով, ապա գլանելով /այսինքն ինչ գնով ուզում է լինի- Ռ.Ղ./... Երկրորդ՝ ուշադրություն դարձրեք Բաքվի վրա, որտեղ քնքուշ մարդիկ Թուրքիայից իրենց համար բույն են գործում... Համառոտ հայտնիր Հայաստանի դրությունը»:

Կամ նրա հայտարարությունը երեք Ղաշնակից երկրների ղեկավարների Բեռլինի /Պոտսդամի/ կոնֆերանսում 1945-ին, երբ խոսելով «Կարսի շրջանի մասին, որը նախքան պատերազմը գտնվում էր Հայաստանի կազմում», նա խոսեց «սահմանի վերականգնման անհրաժեշտության մասին, որը գոյություն ուներ մինչև առաջին համաշխարհային պատերազմը», ընդգծելով, որ «մենք գտնում ենք, որ Կարսի և Արդահանի շրջանում սահմանը ճիշտ չէ, և մենք հայտարարել ենք Թուրքիային, որ եթե նա ցանկանում է մեզ հետ դաշինք կնքել, անհրաժեշտ է ուղղել այդ սահմանը,

իսկ եթե նա չի ցանկանում ուղղել սահմանը, ապա դաշինքի մասին հարցը դուրս է գալիս»: Նույն կոնֆերանսում հնչեց նաև Վ.Մ.Սոլոտովի հայտարարությունը /իհարկե, ոչ առանց Ստալինի հետ համաձայնեցնելու/, թե «1921-ին թուրքերն օգտվեցին խորհրդային պետության թուլությունից և նրանից խլեցին խորհրդային Հայաստանի մի մասը»:

Հոդվածի վերջում Ռ.Ղազանջյանը երկու մեջբերում է կատարում Սանկտ-Պետերբուրգի պրոֆեսոր Ա.Վ.Օստրովսկու «Ով էր կանգնած Ստալինի թիկունքում» գրքից:

«Հանցագործին բացահայտելու համար պետք չէ նենգափոխել փաստերը: Դրա համար բավական է ճշմարտությունը և «Անցյալը մեկնաբանելիս սուտը հանգեցնում է ձախողումների ներկայում և աղետ է նախապատրաստում ապագայում»

«Ոսկե խոսքեր», - ավարտում է իր խոսքը հոդվածագիրը:

«Կոմունիստ» թերթի 1989թ. դեկտեմբերի 23-ի համարում հրապարակված Ռեսուսի-ը և այսպես կոչված «վիճելի տարածքները /1920թ./» ընդարձակ հոդվածում Ռ.Ղազանջյանը ցույց է տալիս, որ հակառակ խորհրդային Ադրբեջանի զավթողական ձգտումների, խորհրդային Ռուսաստանի ղեկավարությանը մեծ դժվարությամբ հաջողվեց հասնել 1920թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում Ռեսուսի և ՀՀ միջև համաձայնագրի ստորագրմանը, որով Ղարաբաղը, Նախիջևանը և Զանգեզուրը ճանաչվեցին իբրև վիճելի տարածքներ և ժամանակավորապես ռազմակոչվեցին խորհրդային կարմիր բանակի զորամասերի կողմից:

Նորահայտ փաստաթղթերի հիման վրա ցույց է տրվում, որ 1920 թվականին, երբ Հայաստանում իշխանության գլուխ էր կանգնած բուլշևիկների հանդեպ թշնամաբար վերաբերվող կուսակցություն, իսկ Ադրբեջանում արդեն խորհրդային իշխանություն էր հաստատված, ՌԿ/Բ/Կ Կենտկոմը և Ռեսուսի կառավարությունը Ղարաբաղը և մյուս տարածքները, որոնց

հավակնում էր Ադրբեջանը, չէին համարում վերջինիս պատկանող և կողմնակից չէին այդ տարածքներն Ադրբեջանին հանձնելուն:

Եվ եթե չկարողացան ավելիին հասնել, ապա դա, ինչպես վկայում է Գ.Վ.Չիչերինը՝ «սահմանային հարցերում Ադրբեջանի կամակորության պատճառով էր»:

Սևրի պայմանագրի պատրանքը և Վիլսոնի հերթական խաբկանքը

«Նովոյե վրեմյա» թերթը 2008թ. մայիսի 29-ի և հունիսի 3-ի համարներում բանավիճային կարգով տպագրել է Հայաստանի Ազգային անվտանգության ծառայության պահեստի գեներալ-մայոր Դավիթ Օհանյանի հոդվածները: Հեղինակը, ուսումնասիրելով Հայաստանի առաջին համառապետության հետախուզության և հակահետախուզության, 1918-1920թթ. Հայաստանում օտարերկրյա հատուկ ծառայությունների գործունեության նյութերը, ինչպես նաև Ազգային արխիվի գաղտնագերծված փաստաթղթերը, դրանցում ի հայտ է բերել ոչ քիչ հակասություններ ու անհամապատասխանություններ: Օգտագործելով նաև համապատասխան պատմագիտական գրականություն, Դ.Օհանյանը փորձել է բուլղորովին այլ տեսանկյունից դիտարկել կարծեք թե քաջ հայտնի փաստերն ու իրադարձությունները՝ ցուցաբերելով կայուն քաղաքացիական դիրքորոշում:

Առաջին հոդվածը կրում է «Սևրի պայմանագրի պատրանքը» վերնագիրը:

Ցույց տալով, որ Սևրի պայմանագրի «Հայաստան» բաժնի համաձայն Հայաստանին էին անցնում Թուրքիայի որոշ վիլայեթների տարածքները, հեղինակը նշում է, որ կոնկրետ սահմանները պետք է որոշեր արբիտրը՝ ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը: Վերջինս 1920թ. նոյեմբերի 22-ին դաշնակիցների քննարկմանը ներկայացրեց առաջարկ, ըստ որի Հայաստանին էին անցնում Վանի և Բիթլիսի վիլայեթների երկու երրորդը, գրեթե ամբողջ Էրզրումի վիլայեթը, Տրապիզոնի վիլայեթի մեծ մասը՝ ներառյալ

նավահանգիստը, ընդհանուր առմամբ շուրջ 100 հազար քառակուսի կիլոմետր տարածք: Արդյունքում Հայաստանի տարածքը կազմում էր շուրջ 150.000 քառակուսի կիլոմետր՝ ելքով դեպի Սև ծով:

Այնուհետև նշվում է, որ պայմանագիրը ցնծություն առաջացրեց Հայաստանում, որը, սակայն, շատ արագ ավարտվեց հիասթափությամբ ու նոր դժբախտություններով:

Հոդվածագիրը նշում է, որ այդ մասին շատ է գրվել, և ուսումնասիրողները համամիտ են նրանում, որ պայմանագիրը հայ ժողովրդին ազգային վերածնության շանս էր տալիս, սակայն, ցավոք, մնաց թղթի վրա՝ Թուրքիայի ընդդիմության և դաշնակիցների միջև հակասությունների ուժեղացման պատճառով:

Սակայն Դ.Օհանյանը փորձում է այդ հարցը քննարկել այլ տեսանկյունով ու հարց է առաջադրում՝ ինչի համար էին Հայաստանին այդքան շատ բան խոստացող դրույթներն ընդհանրապես մտցվում պայմանագրի մեջ: Եվ առաջին հայացքից տարօրինակ թվացող իր հարցադրմանը հեղինակը տալիս էր սեփական մեկնաբանությունները՝ փորձելով նախ ըմբռնել դաշնակիցների գործողությունների տրամաբանությունը:

Անդրադառնալով 1920թ. ապրիլի վերջին կայացած Սան-Ռեմոյի կոնֆերանսին, որի հիմնական մասնակիցներն էին Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան, Ճապոնիան, իսկ ԱՄՆ-ի նեկայացուցիչը մասնակցում էր դիտորդի կարգավիճակով, հեղինակը նշում է, որ այստեղ Թուրքիայի նկատմամբ հաստատվեցին մի շարք տարածքային և այլ պայմաններ, որոնք հետագայում ընկան Սևրի պայմանագրի հիմքում: Դիվանագիտական այդ ողջ խոսք ու զրույցից հեղինակն առանձնացնում է բրիտանական պրեմիեր-մինիստր Լլոյդ Ջորջի ամենահին ոչ դիվանագիտական հետևյալ արտահայտությունը. «Եթե հայերը չեն կարող պաշտպանել իրենց սահմանները, ապա նման ժողովրդից ոչ մի օգուտ չկա, և ոչ մի դաշնակից պետություն պատրաստ չի լինի նրանց օգնել թեկուզ մի գումարտակով»:

Հեղինակը սույն արտահայտությունը ոչ միայն ծայր աստիճան վիրավորական է համարում հայ ժողովրդի համար, այլև գտնում է, որ այն

հարիր է Հիտլերին, որը ժողովուրդներին բաժանում էր «պիտանիների» ու «ոչ պիտանիների»: Իսկ ինչ կատարվեց միլիոնավոր «ոչ պիտանի» հրեաների հետ՝ բոլորին է հայտնի: Խոստովանենք, որ առաջնությունը պատկանում է բրիտանական վարչապետին, որը Հիտլերից շատ առաջ ձևակերպեց «ոչ պիտանի հայ ժողովուրդ» հասկացությունը:

Սակայն գլխավորն այն էր, որ ըստ էության կոմֆերանսում ասվեց. «Բարի ախորժակ, Թուրքիա»:

Հողվածագիրն ընդգծում է, որ 1920թ. գարնանը Թուրքիան արդեն խոշոր ուժեր էր կենտրոնացրել սահմանի վրա և պատրաստ էր ներխուժելու Հայաստան: Եվ միայն Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումն էր, որը հանդես էր գալիս այդ ներխուժման դեմ և իր ծառայություններն էր առաջարկում հանդես գալ իբրև միջնորդ, պատերազմը կանխվեց, ավելի ճիշտ՝ այն հետաձգվեց որոշ ժամանակ:

Բանակցություններ սկսվեցին Մոսկվայում, որտեղ տեղի ունեցած իրադարձությունները հեղինակի կարծիքով ունեին ռազմավարական նշանակություն: Ռուսաստանի արտագործնախարար Չիչերինը հայկական պատվիրակությանն առաջարկեց իրաժարվել եվրոպական դիվանագիտությունից և հայ-թուրքական վեճի լուծումը հանձնել Մոսկվային: Կարելի է ենթադրել, թե ինչպիսի շոկի մեջ ընկան դաշնակիցները. դա կարող էր հանգեցնել Առաջավոր Ասիայի կորստին:

Եվ 1920թ. օգոստոսի 10-ին, երբ բանակցությունները Մոսկվայում դեռ չարունակվում էին, կնքվեց Սևրի հաշտության պայմանագիրը, որը նշանակում էր Թուրքիայի անդամահատում: Թուրքիայի արձագանքը միանշանակորեն կանխատեսելի է՝ պատերազմ: Ինչը կարող է խանգարել Թուրքիային, եթե Եվրոպայի դիրքորոշումն արդեն հնչեցրել է Լլոյդ Ջորջը:

Շարունակելով իր դիտողությունները, հողվածագիրն ընդգծում է, որ 1920թ. հունիսի 1-ին ԱՄՆ-ի Սենատը վերջնականապես մերժեց Հայաստանի մանդատը վերցնելը, որը փաստորեն նշանակում էր Հայաստանին ռազմական օգնություն ցույց չտալը. երաշխավորել օրենսդրորեն և բառացիորեն Թուրքիային պատերազմի մղել Հայաստանի դեմ:

1920թ. սեպտեմբերին Թուրքիան խոշորամասշտաբ ներխուժում սկսեց Հայաստանի դեմ: Սեպտեմբերի 28-ին Հայաստանը օգնության խնդրանքով դիմեց Անտանտի երկրներին, իսկ հոկտեմբերի 8-ին՝ արդեն ողջ քաղաքակիրթ աշխարհին: Սակայն քաղաքակիրթ Եվրոպան, և ոչ միայն նա, խուլ մնացին հայ ժողովրդի կանչերի հանդեպ:

Մինչդեռ վերջին հետազոտությունների համաձայն, արդեն նոյեմբերին Ռուսաստանը Առաջին հանրապետության ղեկավարությանն առաջարկեց զինված օգնություն, որից վերջինները հրաժարվեցին:

1920թ. նոյեմբերի 7-ին Թուրքիայի և Հայաստանի միջև կայացավ զինադադարի համաձայնություն: Հայ ժողովուրդը կարողացավ կենտրոնացնել բոլոր ուժերը և հերոսաբար կանգնեցրեց թուրքական հարձակումը, սակայն ուժերը սպառվելու վրա էին: Նոյեմբերի 9-ին թուրքերը առաջ քաշեցին նոր պահանջներ, որոնք հավասարազոր էին Հայաստանի կապիտուլյացիային:

Նոյեմբերի 18-ին Ալեքսանդրապոլում ստորագրվեց զինադադարի պայմանները, որոնք չափազանց ծանր էին Հայաստանի համար: Այդպիսով Հայաստանի իրաժարումը Սևրի պայմանագրից պրակտիկորեն կանխորոշված էր:

Այդ ֆոնի վրա ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը նոյեմբերի 22-ին դաշնակիցների քննարկմանն է ներկայացնում իրավարարական առաջարկ, որի համաձայն Թուրքիան Հայաստանին պետք է տար մոտավորապես 100 հազար քառակուսի կիլոմետր: «Անըմբռնելի, անհավանական դեպք,- գրում է Դ.Օհանյանը,- մարդկության պատմության մեջ առաջին անգամ պատերազմում հաղթանակած երկիրը պետք է պարտվածին հանձներ իսկայական կտոր տարածք»: Այնուհետև նա հիշատակում է ամերիկահայ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանի միտքը, որն այդ առնչությամբ գրում է, թե այդ որոշումն արդեն նշանակություն չունեի, քանի որ Քեմալի գործերը՝ գրավելով Կարսը և Ալեքսանդրապոլը, սպառնում էին բուն Հայաստանի գոյությանը: «Միթե դա չէր հասկանում Վիլսոնը», - հարց է տալիս հողվածագիրը և շարունակում. «Պարադոքսային իրավիճակ - հայ ժողովուրդը

կանգնած է կործանման եզրին, իսկ ԱՄՆ-ի նախագահը ոգևորությամբ քննարկում է նոր Հայաստանի քարտեզը... Ինչի համար էր ԱՄՆ-ի նախագահը դաշնակիցների քննարկմանը անհմաստ առաջարկ ներկայացնում: Որպեսզի նրա վրա ծիծաղեին: Հագիվ թե: Հետևաբար՝ իմաստ կար»:

Պատկերն ամբողջացնելու նպատակով հողվածագիրն ավելացնում է, որ մի քանի օր անց Հայաստանում հայտարարվեց խորհրդային իշխանություն, իրադարձություն, որը չէր կարող տեղի ունենալ մեկ ժամվա մեջ ու անսպասելիորեն: Հետևաբար հարց է առաջանում՝ ինչի համար էին Սևրի պայմանագրում մտցվում Հայաստանին վերաբերող որոշումներ, իսկ իրավարար Վիլսոնը նոյեմբերի 22-ին կայացնում էր ամփոփիչ որոշում, եթե առաջատար եվրոպական երկրները և ԱՄՆ-ը հաստատ գիտեին, որ Թուրքիան ոչ մի պարագայում չէր համաձայնի Հայաստանին տալ այդ տարածքները և որ Հայաստանը, գտնվելով արյունաքամ վիճակում և ունենալով թույլ զինված ուժեր, ի վիճակի չէր պաշտպանել իր շահերը, և ոչ մի առաջատար պետություն մատը մատին չի խփելու Հայաստանին օգնելու համար: Ավելին՝ նոյեմբերի 22-ից էլ շատ առաջ բոլորն էլ հիանալի հասկանում էին, որ Անդրկովկասի խորհրդայնացումն անխուսափելի է: Դրա ապացույցներն առավել քան բավարար են: Ուրեմն ինչու էր արվում այդ բոլորը: Հեղինակի եզրակացությունը հետևյալն է՝ Սևրի պայմանագիրը ոչ միայն մնաց թղթի վրա ինչ-ինչ պատճառներով, այլ նախօրոք դատապարտված էր և ծրագրավորված էր դրան: Պայմանագրի հողվածները նախատեսված էին ոչ այնքան Հայաստանի, այլ առաջին հերթին Թուրքիայի համար:

Հեղինակի կարծիքով Սևրի պայմանագիրը ոչ թե հետագայում դարձավ առևտրի առարկա, այլ նախատեսված էր հենց դրա համար, իսկ այդ առևտուրն ավարտվեց 1923-ին, Լոզանի կոնֆերանսում, երբ դաշնակիցները վերջնականապես հրաժարվեցին դրանից: Թուրքիան մնաց արևմտյան ուժային դաշտում, իսկ «հայ» և «Հայաստան» տերմիններն անհետացան կոնֆերանսի ամփոփիչ փաստաթղթերից: Ուրեմն սխալ է այն պնդումը, թե Թուրքիան հասավ Սևրի պայմանագրի ոչնչացմանը:

Այսպիսով՝ Սևրի հաշտության պայմանագիրը վաղուց արդեն մեռած է: Սակայն մնացել է նրա ուրվականը, որը նույնպես, հավանաբար, մտնում է այն ստեղծողների պլաններում: Այդ կապակցությամբ հեղինակը վկայակոչում է ամերիկահայ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանի հետևյալ միտքը. «Սևրի հաշտության պայմանագիրը շարունակում է մնալ հիշեցում՝ Հայկական հարցի արդարացի լուծմանը հասնելու հայ ժողովրդի իրավունքի մասին»: Նրա կարծիքով դա առաջին հերթին մշտական գործող նախագուշացում է Թուրքիային՝ ինչպես դամոկլյան սուր: Պայմանագրին վերադառնալու պոտենցիալ սպառնալիքը թույլ է տվել Թուրքիային պահել սանձի տակ՝ երբ անհրաժեշտ է հանդես գալ նրա տարածքային ամբողջականության ազնիվ երաշխավորի դերում. հիշենք թեկուզ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհի վերակառուցումը:

Իսկ եթե ինչ-որ ժամանակ գա Թուրքիան անդամահատելու պահը, ապա պայմանագիրը թույլ կտա նորից խոսել պատմական արդարության մասին:

Իսկ առայժմ կարելի է պահպանել հայերի հույսերը, մանավանդ, որ այդ ուղղությամբ հսկայական փորձ է կուտակված: Բավական է միայն հիշել ԱՄՆ-ի Սենատում Հայոց ցեղասպանության ճանաչման պարբերական եռանդուն, բայց ապարդյուն քննարկումները: Այդ երկրի նախագահի ցանկացած թեկնածու նախընտրական շրջանում խոստանում է ընդունել ցեղասպանությունը, սակայն հետագայում այն իսպառ մոռանում է:

Իր խոսքը հեղինակն ավարտում է այդ հիշեցմամբ, որ ժամանակին Ֆ.Էնգելսը գրել է, թե հայ ժողովուրդը դժբախտություն ունի գտնվելու թուրքական բռնապետության Սցիլլայի և ռուսական բռնապետության հարիբդայի միջև: Ժամանակները փոխվեցին, և հայ ժողովուրդը հայտնվեց «քեմալական մուրճի և բուլշևիկյան սալի» միջև:

Սակայն դրանց պետք է ավելացնել գլխավոր գործոնը՝ «և միջազգային դիվանագիտության նենգության միջև»: Բավական են իլլուզիաները. հայ ժողովուրդը դրանց համար չափազանց թանկ գին է վճարել:

Հայաստանի Ազգային անվտանգության ծառայության պահեստի զեներալ-մայոր Դավիթ Օհանյանի հաջորդ հողվածը, որը հրատարակվել է «Նովոյե վոեմյա» թերթի 2008թ. հունիսի 3-ի համարում, կրում է «Հայաստանի նկատմամբ ԱՄՆ-ի մանդատը՝ Վիլսոնի հերթական խաբեություն» վերնագիրը: Ստորև ներկայացնում ենք հողվածի բովանդակությունն ու հեղինակի առաջ քաշած գլխավոր դրույթները:

1919թ. մարտին Փարիզի հաշտության կոնֆերանսում որոշում ընդունվեց Հայաստանի մանդատը ԱՄՆ-ին հանձնելու մասին: Նման կարևոր քաղաքական վճիռն իրականացնելու համար անհրաժեշտ էր խորապես ուսումնասիրել հարցը: Հենց դրանից էլ սկսեց ԱՄՆ-ը՝ ուսումնասիրությունն սկսելով... Թուրքիայից: Հունիսին տարածաշրջան ժամանեց Կինգ-Կրեյնի հանձնաժողովը, որն այցելեց Սիրիա, Կիլիկիա, Կոստանդնուպոլիս, հավաքեց ընդարձակ տեղեկատվություն: Տեղեկատվություն հավաքեց նաև Անատոլիայի ու Հայաստանի մասին: Հանձնաժողովը հանգեց այն եզրակացության, որ ԱՄՆ-ին պետք է միասնական մանդատ տալ Հայաստանի, Թուրքիայի և Սիրիայի նկատմամբ: Կարելի է պատկերացնել Ֆրանսիայի «հիացմունքը», որին արդեն կոնֆերանսը տվել էր Սիրիայի մանդատը:

1919թ. օգոստոսին տարածաշրջան ժամանեց ամերիկյան զինվորական առաքելությունը, որը գլխավորում էր բրիգադային զեներալ Ջեյմս Հարբորդը: Մշակվեց հատուկ հարցացանկ՝ բաղկացած հազար հարցից: Դրա վրա երկու ամիս աշխատեցին 40 մարդ:

Հարբորդի առաքելությունը, լինելով Անատոլիայում, Կիլիկիայում, Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, առաջ քաշեց ոչ թե Հայաստանի, այլ Անդրկովկասի, Անատոլիայի, Կիլիկիայի, Կոստանդնուպոլիսի՝ նեղուցների հետ միասին և Փոքր Ասիայի հարակից տարածքների նկատմամբ միասնական մանդատ վերցնելու գաղափարը:

Հոկտեմբերին ամփոփիչ զեկույցը ներկայացվեց ԱՄՆ-ի նախագահ Վ.Վիլսոնին: 1920թ. մայիսին նախագահը Սենատ մտցրեց առաջարկ՝ նշված տարածքների մանդատը վերցնելու մասին, սակայն հունիսի 1-ին Սենատը մերժեց այն:

Ինչպես նշում է Դ.Օհանյանը, բնականորեն հարց է առաջանում. ինչու է այդ արշավախումբը կոչվում «ԱՄՆ-ի ռազմական առաքելություն Հայաստանում», երբ իրականում այն ԱՄՆ-ի ռազմական առաքելություն էր Թուրքիայում և Անդրկովկասում: Եվ եզրակացնում է, որ ավելի շուտ դա սովորական դիվանագիտական թակարդ էր: Չէ որ կոնֆերանսի արձանագրություններում խոսքը գնում էր Հայաստանի մանդատի մասին: Այլ անվանումը կառաջացնեի մի շարք խճճող և այդ պատճառով էլ անցանկալի հարցեր դաշնակիցների կողմից Վիլսոնի կառավարությանը: Իսկ «Հայաստան» բառը տասնամյակներով հասարակության ականջին էր և ինքնին ամեն ինչ բացատրում էր:

Տվյալ հարցի շուրջ ստեղծված իրադրության վերլուծումը թույլ է տալիս անել հետևյալ հիմնական հետևությունները: Միմիայն Հայաստանի մանդատի ստանձնումը գործնականորեն հնարավոր չէր ելնելով մի շարք քաղաքական և տնտեսական գործոններից, նաև Հայաստանի աշխարհագրական դիրքից, նկատի ունենալով շրջափակման մշտական վտանգը: ԱՄՆ-ի կողմից հռչակված Անդրկովկասի և Թուրքիայի միասնական մանդատը վերցնելու մտադրությունը ի սկզբանե նույնպես անիրագործելի էր, քանի որ դաշնակիցները ոչ մի դեպքում չէին համաձայնվի զիջել տարածաշրջանի այդ «համեղ պատառը», և աշխարհը կրկին կկանգնեի նոր պատերազմի սպառնալիքի առջև: Սա չէին կարող չհասկանալ թե ԱՄՆ-ը, թե դաշնակիցները: Այդ իսկ պատճառով Հարբորդի առաքելության զեկույցը ըստ ամենայնի հիմնավորված կարելի է անվանել մանդատից պլանավորված հրաժարում:

«Ինչի համար սկսվեց խաղը մանդատի հետ», - հարցնում է հողվածագիրը և պատասխանում. ճշմարտությունը պահպանվում է ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի արխիվներում: Բայց այն, որ դա խաղ էր, հարկ չկա կասկածել: Հարբորդի առաքելության հաշվետվությունը նախօրոք պլանավորված հրաժարում էր մանդատից:

Ռիբեմ ինչի համար էր արվում այդ բոլորը: Իրական նպատակները բոլորովին այլ էին, որոնք հայտնի էին միայն ԱՄՆ-ի Պետդեպարտա-

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ռ.Ղազանջյան. Պատմությունն առանց այդ էլ խեղաթյուրված է 7

2. Ռեմ Ղազանջյան. Վերստին 1921 թվականին Ռուսաստանի կողմից ռուս-թուրքական պայմանագրի ստորագրման հարցի շուրջ /Մոսկովյան արխիվների նախկին գաղտնի փաստաթղթերի լույսի տակ/ 17

3. Ռեմ Ղազանջյան. «Եղել է, արդյոք, Ստալինը հայատյաց /ինչի մասին են խոսում փաստերը/» 29

Սևրի պայմանագրի պատրանքը և Վիլսոնի հերթական խաբկանքը 38

մենտին: Սակայն մի նպատակ անկասկած է՝ տարածաշրջանի խորքային հետախուզում ըստ հարցերի ամենալայն սպեկտրի: Նույնիսկ պարզ ծանոթությունը հարցացանկին, որի համաձայն աշխատում էր Չարբորդի առաքելությունը, ծնում են մի շարք հարցեր, իսկ երբեմն էլ տարակուսանք:

Այսպես՝ կարողում ենք. ենթաբաժին 554. կենդանական աշխարհի հարստությունը: 554.1 Ամբողջ շրջանի ընդհանուր նկարագիրը: 554.11 Որսի օրենքները: 554.12 Չկնորսության օրենքները: 554.13 Նկարագրությունը և ընդհանուր տեղաբաշխումը. ա/թռչունների, բ/զազանների, գ/ ձկների, 554.14. Նշված արդյունագործությունից առևտրական օգուտը, 554.15. Օգուտներ ստանալու նոր միջոցների օգտագործման հնարավորությունը: 554.2. Մանրամասն ակնարկներ ըստ տարածքների / Թուրքիա, Անատոլիա, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան/:

Հետաքրքրվել Հայաստանում, որտեղ մարդիկ տասնյակ հազարներով մահանում են սովից, որսի և ձկնորսության օրենքներով՝ սրբապղծություն է: Իսկ գոյություն ունի, արդյոք, թեկուզ որևէ կապ Հայաստանի մանդատը վերցնելու և այն բանի միջև, թե ինչ եղանակով են Ադրբեջանում թառափ, կամ Վրաստանում վայրի խոզ ու բադ որսում, դա ընդհանրապես չի իմաստավորվում:

Ավարտելով հոդվածը, հեղինակն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ինչպես ամբողջ տարածաշրջանը, այնպես էլ Հայաստանը նույնպես օտարերկրյա հետախուզությունների գործունեության ակտիվ գոտի էր: Անգլիան, Թուրքիան, Վրաստանը, Ադրբեջանը, Ռուսաստանը, սպիտակ-գվարդիականները Հայաստանի օպերատիվ դաշտի ամենակտիվ խաղացողներն էին: Հատուկ ուշադրության արժանի են բարեգործական կազմակերպությունները, որոնք այժմ էլ շատ հարմար քող են հետախուզությունների համար: Բայց դա խոսակցության առանձին թեմա է:

Մ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ, Է.ՄԵԼԶՈՆՅԱՆ

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԳԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Ուսումնամեթոդական ձեռնարկ ուսանողների և
մագիստրանտների համար)

Համակարգչային շարվածքը հրատարակչությանն է
տրամադրել հեղինակը:

Համակարգչային չափաբերման, էջադրման, տպագրական
բնօրինակի պատրաստման աշխատանքները՝

Միքայել Քոչարյանի

ISBN 978 - 99941 - 69 - 19 - 1

Ստորագրված է տպագրության 11.05.09:

Թուղթ՝ գրելու (A4):

Տպագրությունը՝ «Ռիզոգրաֆ» եղանակով:

Տպագր. 3, հրատ. 2.5 մամուլ:

Պատվեր 100 - 09:

Տպաքանակը՝ 150

Գինը՝ պայմանագրային:

Խ. Արվյանի անվ. ԳՊՄԳ «Մանկավարժ» հրատարակչություն: Երևան, Կենտրոն, Տ.
Մեծի 17: